Azg Ազգ

27 ՕԳՈՍՏՈՍ 2004 ՈՒՐԲԱԹ 148 (3079)

Հայաստանի ազգային գրադարան

Լրագրողական բողոքի ակցիա՝ դեղի Ծաղկաձոր

Օգոստոսի 24-ին Ծաղկաձորում «Ֆոտոլուր» գործակալության ֆոտոլրագրող Մխիթար Խաչատրյանի նկատմամբ կատարված բռնարարը գրեթե համընդհանուր դատապարտման ալիք բարձրացրեց մեր լրատվամիջոցներում: Դրան երեկ արձագանքեց, մեզ համար անսովոր արագությամբ, ՀՀ գլխավոր դատախազությունը, որի հաղորդագրությունը կարելի է կարդալ մեր 2-րդ էջում: Եվ ահա, մեր երկրի առաջատար թերթերն ու մյուս լրատվամիջոցները որոշել են առաջիկա շաբաթ օրը բողոքի ակցիա կատարել հենց Ծաղկաձորում, որտեղ լրագրողներն ու ֆոտոլրագրողները, այդ թվում նաեւ «Ազգի», կկատարեն «խորհային» նկարահանումներ Ծաղկաձորի անտառները ոչնչացնողների եւ ժողովրդից ու պետությունից գողացված գումարներով շքեղ առանձնատներ կառուցողների տարածքներում: Զգուշացնենք, որ լրագրողները մեծ ցանկություն ունեն հանդիպելու նորահարուստների վարձկան սափրած գլուխների...

Ռուսաստանը Սաակաշվիլուն հորդորում է ձեռնպահ մնալ ռազմատունչ հայտարարություններից

Եվ ուժերը կենտրոնացնել Վրաստանի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման վրա

ԹԱԼԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիի իշխանությունները երեկ անուղղակիորեն հաստատեցին, որ Հարավային Օսիայի խնդիրը կարգավորելու հարցում այնքան էլ խաղաղասիրաբար չեն տրամադրված: Բաթումում տեղի ունեցած կառավարության արտագնա նիստում Վրաստանի նախագահը հայտարարել է, որ Հարավային Օսիայի վերջին գործողությունները պարզել են երկրի զինված ուժերում սաբոտաժի եւ դավաճանության փաստեր:

«Նրանք, ովքեր նռնակների փոխարեն արկղներում քարեր են շարել, իսկ փամփուշտների փոխարեն՝ ավազ լցրել, դավաճաններ են եւ դրա համար պատասխան պիտի տան: Նման մարդիկ սեփական ժողովրդի թշնամիներն են», Միխայիլ Սաակաշվիլու խոսքերը մեջբերում է «Ռեգնում» գործակալությունը: Որ նռնակների փոխարեն արկղներում քարեր են շարել, իսկ փամփուշտների փոխարեն՝ ավազ լցրել, պարզվել է հարավօսական վերջին իրադարձությունների ժամանակ, երբ վրացական զորքերը, ինչպես պնդում է օսական կողմը, փորձ արեցին ռազմական ճանապարհով լուծել վրաց-օսական հակամարտությունը:

Վրաստանի պետանվտանգության նախարարության ռազմական հակահետախուզության աշխատակիցները, ըստ «Նովոստի» գործակալության, ձերբակալել են պատերազմի նախարարության երեք սպաների, այդ թվում՝ Օսիաուրի գյուղում գտնվող ռազմապահեստի պետ Ամիրան Թեդիաշվիլուն. ստուգումները ցույց են տվել, որ այդ նռնակները վաճառվել են, իսկ դրանց փոխարեն՝ արկղներում հայտնաբերվել են սովորական քարեր:

Տես էջ 8

Գերմանիայի դեսպանի հայտարարությունն առաջ է բերել բուռն հակազդեցություն

Դրան արձագանքել է Թուրքիայում իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության խորհրդարանական խմբակցության փոխնախագահը

Օգոստոսի 24-ին Կարսի փոխքաղաքապետ Իսրաֆիլ Չաֆազի հետ հանդիպմանը Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վոլֆ Ռուքհարդ Բոռնը հայտարարել էր. «Որքան ինձ հայտնի է, Կարսն ու շրջակայքը Հայաստանի սահմանադրությամբ հայկական պետության մաս են կազմում: Ես այդ մասին ոչ թե կարդացել, այլ լսել եմ: Հայ-թուրքական սահմանի բացումը ենթադրում է Ադրբեջան-Ղարաբաղ հիմնահարցի կարգավորում, եթե Ադրբեջանի կառավարությունը հրաժարվի Ղարաբաղից, ապա սահմանը կբացվի»:

Տեղեկության աղբյուրը «Դյունդեն Բուգյունե Թերջուման» օգոստոսի 25-ի համարն է: Երեկ թուրքական այս թերթի նյութը թարգմանաբար ներկայացնելով ընթերցողին, «Ազգը» միաժամանակ գրել է, որ մեզ չհաջողվեց այլ թերթերի հետ համեմատելու միջոցով ստուգել տեղեկության իսկությունը: Այլ կերպ՝ Թուրքիայում Գերմանիայի դեսպան Բոռնի Կարսում արած հայտարարությունը վրիպել էր թուրքական մյուս թերթերի ուշադրությունից:

Հակառակ թերթերի, ինչպես այդ մասին օգոստոսի 26-ին նշում է «Նեթիաբերը», դեսպան Բոռնի հայտարարությանը բուռն հակազդեցությամբ արձագանքել է Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի պատգամավոր Էյուփ Ֆաքսան: Ի դեմ, նա շարքային պատգամավոր չէ, այլ երկրում իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության խորհրդարանական խմբակցության փոխնախագահն է:

Ըստ ինտերնետային «Նեթիաբերի», Անկարայից իր ծննդավայր Օրդու ուղեւորվելիս խմբակցության փոխնախագահ Ֆաքսան իջեւանել է Սամսունում: Նա այնտեղ քաղաքապետարան է այցելել, ապա եւ արձագանքել է Գերմանիայում Թուրքիայի դեսպան Բոռնի «Կարսն ընդգրկված է Հայաստանի սահմաններում» հայտարարությանը՝ համարելով դա «ցնդաբանություն»: Ֆաքսան նշել է, որ Թուրքիայի Հանրապետությունը ոչ երկրում, ոչ էլ դրսում չի պատրաստվում որեւէ մեկին թույլ տալ շահարկելու թուրքական պետության սահմանների, տարածքային ամբողջականության եւ միասնականության հարցերը:

Այնուհետեւ Ֆաքսան շարունակել է. «Այս հարցերը Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի պես պետությունները ժամանակ առ ժամանակ օգտագործում են ներքաղաքական նպատակներով: Թուրքիայի Հանրապետության սահմաններում բնակվող հայերը երկրի առաջին դասի քաղաքացիներն են: Հետեւաբար նրանք կտրականապես մերժում են նման տգեղ հայտարարությունները, անփառունակ պահանջներն ու պատմական հիմքից զուրկ նմանօրինակ մոտեցումները: Այս կարգի հայտարարությունները, անկախ հեղինակի անձից, թե նա կլինի Թուրքիայում Գերմանիայի դեսպանը կամ մեկ ուրիշը, որեւէ արժեք չեն ներկայացնում:

Վերջում «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության խորհրդարանական խմբակցության փոխնախագահ Էյուփ Ֆաքսան, ակնարկելով հիտլերյան Գերմանիայի մասին, ավելացրել է. «Կարծում եմ, խնդրո առարկա հայտարարությունն անցյալի նկատմամբ դեսպանի կարոտն է արտահայտում: Նրա տեսակետը որեւէ առնչություն չունի ներկա գերմանական պետության տեսակետի հետ»:

Հ. Ղ.

Բրյուսելում կբացվի «Մակուբային եղեռն. Թուրքիա» ցուցահանդեսը

ԵՐԵՎԱՆ, 26 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արեւմտյան Հայաստանի պատմական հուշարձանների լուսանկարների «Մակուբային եղեռն. Թուրքիա» խորագրով ցուցահանդեսը սեպտեմբերի սկզբին առաջին անգամ կբացվի Բրյուսելում: Այս մասին տեղեկացրեց հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության երեւանյան գրասենյակի պատասխանատու Սամվել Կարապետյանը՝ նշելով, որ եկող տարի Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի կապակցությամբ նկարները կներկայացվեն նաեւ Երեւանում: Նրա խոսքերով, ցուցահանդեսում կներկայացվեն Արեւմտյան Հայաստանի տարածքում գտնվող բազմաթիվ հայկական հուշարձանների, թաղամասերի, գյուղերի, ինչպես նաեւ քաղաքների ներկա ու նախկին 80 լուսանկարներ: Ըստ նրա, զուգահեռաբար նույն կետերից կատարված լուսանկարները կբացահայտեն թուրքերի կողմից հայկական պատմական հուշարձանների նկատմամբ իրականացվող քաղաքականությունը: Նրա խոսքերով, իրենց խնդիրն է լուսանկարների համար կազմակերպել մշտական ցուցադրություն, հնարավոր է, որ հենց Ցեղասպանության թանգարանում: Ս. Կարապետյանը նկատեց, որ ցուցադրության նպատակն է պարզաբանել, «թե եվրոպական պետությունների շարքում կանգնել, ԵՄ-ին անդամակցել ձգտող Թուրքիան ինչպիսի՞ կեցվածք ունի մշակութային արժեքների նկատմամբ»:

Հայ-չինական ռազմական համագործակցությունը

Օգոստոսի 26-ին ՀՀ նախագահին ընդունեցին ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը ընդունեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պաշտպանության նախարարության արտաքին հարաբերությունների գլխավոր վարչության պետի տեղակալ, գեներալ-մայոր Ցյան Լիխուայի գլխավորած պատվիրակությանը եւ Հայաստանում Չինաստանի դեսպան Ցզո Սյուելյանին:

Եվս մեկ անգամ ընդգծելով, որ Չինաստանն ու Հայաստանը եղբայրական երկրներ են, հատուկ ուշադրություն հատկացվեց մեր երկու երկրների ռազմական համագործակցությանը: Նշվեց, որ այդ համագործակցությունը լավ հիմքերի վրա է դրված եւ օրեցօր խորանում է: Այսօր Չինաստանում ռազմական բարձրագույն հաստատություններ են ավարտել 10 հայ սպաներ, 2004-2005 թթ. ռազմական ուսուցման պլանով Հայաստանի զինված ուժերին հատկացված է եւս 6 տեղ եւ, սպաների թվաքանակն ավելացնելու ցանկության դեպքում, Չինաստանի ռազմական ղեկավարությունը սիրով պատրաստ է այդ հարցի քննարկմանը:

ՀՀ պաշտպանության նախարարն ավելացրեց, որ հայ-չինական հարաբերությունները թեւակոխել են այնպիսի մակարդակ, որ մոտ ապագայում սպասվում են երկկողմ բազմաթիվ հանդիպումներ. սեպտեմբեր ամսին ՀՀ նախագահի այցը Պեկին նոր խթան կհանդիսանա մեր երկու երկրների հետագա համագործակցության համար:

Հանդիպման ավարտին Սերժ Սարգսյանը ջերմորեն շնորհավորեց պատվիրակներին՝ Աթենքի օլիմպիական խաղերում Չինաստանի հավաքականի հաջողությունների, չինացի մարզիկների տարած բազմաթիվ ու համոզիչ հաղթանակների առիթով:

Հանրային սննդի անբուժելի ախտերը

Թաղապետարաններն ու ներքին գործերի կառույցները համառորեն անտարբեր են

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԹԱՐՅԱՆ

Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչությունը կրկին բացօթյա վաճառքով ներկայացվող սննդամթերքի հետազոտություն է կատարել: Նույն վտանգավոր արդյունքներն են, ինչը բացահայտվեց ընդամենը 1 ամիս առաջ կատարված ուսումնասիրության ժամանակ: 181 նմուշներից 48-ում հայտնաբերվել են աղիքային ցուտիկի խմբի մանրէներ, հյութերի, կվասի, թարմ մրգային կոկտեյլների դեպքում՝ 108 նմուշից 73-ում են հայտնաբերվել նույն մանրէները:

Մեկ անգամ չէ, որ խոսվել ու խոսվում է տարբեր մրգահյութերի փողոցային վաճառքի անթույլատրելիության մասին: Այդ վաճառքն արգելելու, վաճառակետերը փակելու վերաբերյալ գրեթե ամեն տարի որոշումներ ու հանձնարարականներ են հրապարակել եւ գլխավոր սանիտարական բժիշկը, եւ քաղաքապետարանը: Այս տարվա ընթացքում միայն քաղաքապետարանը բացօթյա վաճառքն արգելելու մի քանի որոշում է ընդունել: Սակայն մրգահյութերի սպասարկման փողոցային կետերի բազմությունը տարեցտարի ավելի է սվարանում: Բավական է մի քանի հարյուր մետր քայլել, օրինակ, Տիգրան Մեծի պողոտայով եւ կհամոզվեք: Ավելին, այս տարի զանազան արհեստածին խտափոշիներով հյութերին ավելացել են կվասը եւ, այսպես ասած, թարմ մրգային կոկտեյլներն ու պյուրեները:



Տես էջ 2

ԸՆԹԱՑԻԿ

ՄԱՐԴԿԱՅՈՐՅԱՆ ԲՈՆԱՐԿՈՒՄ

Հարուցվել է քրեական գործ

Օգոստոսի 24-ին «Ֆոտոլուր» լրատվական գործակալության ֆոտոլուսանկարիչ Մխիթար Հակոբի Խաչատրյանի եւ «Առավոտ» օրաթերթի լուսանկարիչ Ա. Իսրայելյանի նկատմամբ խուլիգանական գործողություններ կատարելու եւ վերջիններիս, որպես լուսանկարիչների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու փաստերի առթիվ օգոստոսի 25-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 164 հոդվածի 1-ին մասով եւ 258 հոդվածի 1-ին մասով:

Քրեական գործի քննությամբ բացահայտվել է հանցագործություն կատարած անձի ինքնությունը. վերջինս Երեւան քաղաքի բնակիչ (Նորքի 4-րդ զանգված, 13 շենք, 15 բնակարան), 1961 թ. ծնված Գագիկ Ռազմիկի Ստեփանյանն է: Հիշյալ անձը բերման է ենթարկվել:

Քրեական գործի նախնական տվյալներով պարզվել է, որ «Ֆոտոլուր» լրատվական գործակալության ֆոտոլուսանկարիչ Մխիթար Հակոբի Խաչատրյանն իր մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելու ընթացքում, Ծաղկաձոր քաղաքի սպորտային համալիրի հարակից անտառային տարածքում կառուցված մի շարք առանձնատներ լուսանկարելուց հետո վերադարձել է Հայաստանի գրողների միության Ծաղկաձորի հանգստյան տուն: Երբ վերջինս լուսանկարիչ Աննա Իսրայելյանի եւ «Առավոտ» օրաթերթի վարորդի հետ գտնվել է նշված հանգստյան տան ճեմասրահում, քաղաքացի Գ. Ստեփանյանը հարձակվել է Մ. Խաչատրյանի վրա եւ հանգստյան տան աշխատակիցների ու հանգստացողների ներկայությամբ խուլիգանական հայհոյանքներ է տվել նրա եւ լուսանկարիչների հասցեին, սպառնացել եւ բռունցքներով հարվածներ է հասցրել Մ. Խաչատրյանի գլխին՝ պահանջելով իրեն հանձնել լուսանկարած կադրերը, փորձելով նրան դուրս հանել ճեմասրահից:

Այնուհետեւ քաշքռուկը տեղափոխվել է հանգստյան տան տնօրենի աշխատասենյակ եւ տնօրենի, գրականագետ Ասոն Եղիազարյանի եւ այլոց ներկայությամբ նշված անձը շարունակել է՝ խուլիգանական գործողությունները՝ հարվածներ հասցնելով տուժողի գլխի, պարանոցի, մեջքի եւ ձեռքերի շրջանում, մատներով ամուր սեղմել վերջինիս կոկորդը: Նշված անձը, Մ. Խաչատրյանից խլելով լուսանկարչական NIKON-D մակնիշի լուսանկարչական տեսախցիկի հիշողության չիպը, հեռացել է:

Մ. Խաչատրյանը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում տված բացատրության մեջ հաստատել է իր նկատմամբ իրականացված բռնարարքների գործադրման եւ խուլիգանություն դրսեւորելու հանգամանքը, սակայն հրաժարվել է ենթարկվել դատաբժշկական փորձաքննության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Երբ լկտիությունը հատում է ամեն սահման

Տյուքական կուրությամբ բռնված մամոնայի սպասավոր ընչաքաղցներ ակնհայտորեն ամլացնում են հայոց հողը՝ սրկամտության տանում մարդկանց՝ նրանց դատապարտելով գեշնամած ու սողացող կենսակերպի, որում ստեղծագործումի, մտքի, վերլուծումի եւ որեւէ առողջ հունդ արդեն իսկ ծլարձակվելու ընդունակ չի կարող լինել, երբ ամենուրեք վախի ու անկարողության ուղվանքն է շրջում: Ծախու հասարակություն, որ ընտրությունից ընտրություն պատգամը: Ծանոթ ձեռագիր: Փորձիր մատդ դնել թարախակալած վերքի ծորանին, որտեղից ժահրոտ փողեր են հոսում, փորձիր երկրիդ բնահարստությունների մասին մտահոգվել, անտառ լինի, ընդերք կամ մշակութային արժեք, այն էլ հրապարակայնորեն, կորած ես, կհայտնվեն հաստավզերը ու սափրած գլուխները: Պատասխանատվություն կրող չկա: Դատապարտումի մի հայտարարություն, մեկ-երկու հրապարակում կամ հաղորդում՝ ու ներկայացումն ավարտվում է: Անպատժելիության մթնոլորտը հասկանալի է այլեւս: Սա խաղ է, մասնակիցները թատերաբեմից չիջնող բոլորին հայտնի քաղաքական ու գործարար աշխարհի մարդիկ են, մյուսներն այլեւս հանդիսատես էլ չեն: Խաղը գնում է իրենց փակ շրջանակում. տալիս են, առնում, միմյանց մեջ երկիրը, հողը մաս-մաս անում, ազատ է, հարստանալու, փողի մրցավազք: Թեթեւ ունեն մյուսների վրա, գրում են, չեն գրում, բարոյականություն են պահանջում, հայրենիք են ուզում ունենալ, երկիր են ուզում կառուցել, դատարկ բաներ են: Խաղի մեջ խցկվեցիր, գլուխդ կջարդեն:

Ու այս ամենից, օր-օրի շատանում է Հայաստանը լքել ցանկացողների քանակը, որովհետեւ հուսահատվում ու չեն հավատում, թե գալու է քարերը հավաքելու ժամանակը: Բայց, այնուամենայնիվ, նա՝ այդ ժամանակը, գալու է:

ՄԵԼՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ



ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Թաքնված դանակահարողին բերման ենթարկեցին

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության տրամադրած տեղեկագրից տեղեկացանք, որ մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով բերման է ենթարկվել օգոստոսի 9-ին Սերգեյ Կ.-ին դանակահարող՝ 1966 թ. ծնված, նախկինում դատված Արթուր Ա.-ն: Ըստ նրա, օգոստոսի 9-ին Արարատյան առաջին զանգվածի շենքերից մեկի մոտ Սերգեյ Կ.-ին անզգուշաբար վնասվածքներ է հասցրել վաճառքի նպատակով իր մոտ եղած դանակներով: Կատարվում է նախաքննություն:

Դանակահարություն Վաղարշյան փողոցում

Օգոստոսի 25-ին ոստիկանության Արաբկիրի բաժնի աշխատակիցները մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով բերման են ենթարկել 1964 թ. ծնված Ալբերտ Գ.-ին: Վերջինս նույն օրը Վաղարշյան փողոցի շենքերից մեկի մոտ վիճաբանության ժամանակ ծալովի դանակով հարվածել եւ մարմնական վնասվածքներ է հասցրել Արայիկ Մ.-ին: Կատարվում է նախաքննություն:

«Ազգային ու պետական անվտանգության ոլորտը հանձնել հայ ազգայնականներին»

Հայ արիական միաբանության գերագույն խորհուրդը դատապարտում է «սափրած գլուխների» հակամարդկային ու հակազգային գործունեությունը, որի հիմնական թիրախը դարձել են զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները: Խորհուրդը նշում է, որ «սափրած գլուխների» տերերը փորձում են վախի ու սարսափի մթնոլորտ ձեւավորել՝ իրենց իշխանությունն ու թալանը լկտիաբար շարունակելու նպատակով: «Այս բոլորի համար նախեւառաջ պատասխանատու է Հայաստանի նախագահը: Եթե նա չի պաշտպանում Հայաստանի քաղաքացիների սահմանադրական իրավունքները եւ դրանով իսկ՝ կամա թե ակամա լրացուցիչ իրավունքներ տալիս համազգային թալանից հղփացած «ազգի բարերարներին», ապա նրա հետագա պաշտոնավարումը ակնհայտորեն կդառնա համազգային աղետ», ասված է հայտարարության մեջ:

Նման անցանկալի իրավիճակից խուսափելու համար երկրի նախագահին, վարչապետին եւ ԱԺ նախագահին խորհուրդն առաջարկում է ազգային ու պետական անվտանգության ոլորտը հանձնել հայ ազգայնականներին, օրինակ, Հայ արիական միաբանությանը, «որից հետո Հայաստանի հանրությունը շաս շուտով կզգա, թե ո՞ւմ տեղը որտեղ է, եւ ի՞նչ է նշանակում ազգային ու իրավական պետություն»:

Ռ. Պ.

ՊՈԳՈՅԱՅԻՆ ՍՈՒԵՎՈՒՐ

Հանրային սննդի անբուժելի ախտերը

Սկիզբը՝ էջ 1

Մեկ անգամ չի խոսվել նաեւ այն մասին, որ քիմիական ծագման ներկանյութերով ու կասկածելի բաղադրությամբ մրգափոշիներն առողջության համար աննպաստ հավելանյութեր են բովանդակում, որոնք տարիներ կուտակվելով աղիներում, ի վերջո, իրենց մասին հիշեցնում են որեւէ ավերիչ հիվանդության հայտնությամբ: Որ դրանք իսկապես կասկածելի են, վկայում է միայն ssիպ համի անմիջական տհաճ զգացողությունը, որ հետո երկար ուղեկցում է մեզ: Զարմանալի է, բայց նույնիսկ 21-րդ դարի լուսավորյալ ժամանակներում սպառողը համակերպվում է նման իրողության գոյության հետ, չի հրաժարվում իր առողջությունը թունավորող ըմպելիքով ծարավը հագեցնելու գայթակղությունից:

Արտաքոց փաստ է նաեւ, որ բացօթյա առեւտրի անթույլատրելիությունը որեւէ օրենսդրական ակտով ամրագրված չէ:

Փողոցը սննդատեսակ ու մրգահյութ պատրաստելու ու իրացնելու համար ամենաանընդունելի տարածքն է: Սանիտարիկ ամեն մի պայման անխնա ոտնահարվում է այստեղ: Հենց նույն մրգահյութի վաճառքի կետերին կից խայտաբղետ աղբակույտերը, տրանսպորտային միջոցների արտանետումներն ու բանուկ փողոցների փոշին անխուսափելի են դարձնում մատուցվող հյութերի որակական հատկանիշների նոր «հարստացումները»:

Կվասն ու մրգահյութերը մեզ հրամցնող անձինք, բնականաբար, բժշկական զննություն չեն անցել, ինչը պարտադիր է կառավարական համապատասխան որոշմամբ: Այսինքն, սննդի ոլորտում աշխատողները նախքան աշխատանքի ընդունվելը եւ ընդունվելուց հետո էլ որոշակի պարբերականությամբ՝ 3-6 ամիսը մեկ պարտադիր բժշկական քննություն պետք է անցնեն: Ով կարող է բացառել, որ նրանց մեջ չկան վարակիչ հիվանդություններ (տուբերկուլյոզ, դիզենտերիա, տիֆ-պարատիֆ ե այլն) բացիլակիրներ: Առավել եւս տուբերկուլյոզի հավանականությունն է խիստ մեծ՝ նկատի առնելով վերջին տարիներին զուտ սննդի ու սոցիալական դդդապատճառներով դրա աննախադեպ տարածվածությունը: 50 դրամով ծարավը հագեցնելուց հետո մարդը կարող է տուն վերադառնալ որեւէ ախտ վաստակած:

Միանվագ օգտագործման բաժակները գնորդին են հրամցվում երկրորդ, երրորդ անգամ օգտագործելուց հետո: Սառնարանային սարքավորումների, հոսող սառը ու տաք ջրի, ախտահանող լուծույթների, ջրահեռացման համակարգի գոյության մասին ավելորդ է խոսել: Բաժակները ողողելիս վաճառողներից մեկը ջուրն անմիջապես ափում էր մայթի վրա:

Փողոցում պատրաստվող ամեն մի մրգահյութ ու սննդատեսակ առողջության համար վտանգի աղբյուր են: Նորաձեւ դարձած թարմ մրգային կոկտեյլները սովորաբար պատրաստվում են հատապտուղներից՝ մոշ, մորի, հաղարջ, ելակ: Անհարթ մակերեսով այս պտուղները դժվար է լվանալ նույնիսկ հոսող ջրով, ուր մնաց փողոցում, ուր դրա համար ոչ մի պայման չկա: Եվ չնայած հաճելի զովություն պարգեւելուն, այդ կոկտեյլներն էլ անկասկած անվտանգության կասկածելի ցուցանիշներով են հատկանշվում:

Այնուամենայնիվ, զուտ փողոցային վաճառքի արդյունքում սննդային թունավորումների, սաղմոնելաղիքային տրակտի խանգարումների դեպքեր համաճարակաբանները չեն արձանագրում: Եվ դա ոչ այն պատճառով, որ նման դեպքեր իսկապես չեն եղել: Պարզապես այդ կետերից օգտված գնորդները, սովորույթի համաձայն, բժշկի դիմում են միայն ծայրահեղ դեպքերում: Առիթն օգտագործելով, նրանց տեղեկացնենք, որ սննդային սուր թունավորումները բուժվում են պետպատվերի շրջանակներում, եւ բացառապես դրամի գործոնը նկատի առնելով, պետք չէ դիմել ինքնաբուժման: Իրազեկելով, թե որ սեղանիկի ինչ մրգահյութից կամ «համեղ» պատառից եք օգտվել, մյուս գնորդներին էլ կաղահովագրեք ձեր վիճակին արժանանալուց: Առայժմ նման կարգի խոսնովանություն, սակայն, ոչ մի հիվանդ չի արել:

«Պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչությանը օրենսդրորեն լիազորություններ չեն տրված վերահսկելու փողոցային առեւտուրը, որովհետեւ այն օրենսդրությունից դուրս գործող իրողություն է: Մենք լիազորված ենք վերահսկելու օբյեկտները, բայց ոչ պատահական, անհասցե մարդկանց: Մենք պարզապես հարցի կարեւորությունից ելնելով՝ իրավիճակն ենք ուսումնասիրում, եւ պարբերաբար իրազեկում այդ մասին տեղական ինքնակառավարման ու ներքին գործերի մարմիններին: Այդ նրանք են, որ հետեւողականորեն պիտի հետամուտ լինեն պրոբլեմի լուծմանը:

Թաղապետարանները վաճառքի թույլտվություն տալուց առաջ կարող են ներկայացնել նաեւ վաճառքի համար անթույլատրելի սննդատեսակների ցուցակը: Վաճառողի կողմից այդ պայմանը խախտելու դեպքում նրանք կարող են թույլտվությունը հետ վերցնել», առաջարկում է տեսչության պետի տեղակալ Մարիետա Բասիլիսյանը եւ թվարկում բազմաթիվ հասցեներն ու վաճառակետերը, որոնց վերաբերյալ իրենք նամակներով ու ահազանգերով «ոմբակոծել» են թաղապետարաններին: Սակայն թաղապետարանները տարիներ շարունակ նման հետեւողականություն ցուցաբերելու որեւէ ցանկություն չեն արտահայտում: Նույնը եւ ներքին գործերի կառույցները: Ամենաթողության ու վերահսկողության բացակայության պայմաններում նման աներեւույթ վտանգներից ինքներս մեզ պիտի պաշտպանենք: Սա հանրային սննդից օգտվող այսօրվա գնորդի համար ոսկե կանոն պիտի դառնա:

Ղժգոհ են եւ մտավորականները, եւ գիտնականները

Երեկ ՀՀ վերաքննիչ դատարանում պետք է լսվեր Մշակույթի հայկական ֆոնդի եւ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի տարածքային վեճը:

Դատական նիստը, սակայն, չկայացավ՝ դատավորներից մեկի բացակայության պատճառաբանությամբ: Հայտարարվեց, որ հիշյալ հարցը լսվելու է սեպտեմբերի 2-ին, ժամը 10:30-ին:

Ասենք, որ նախօրյակին ՄՀՖ-ի նախաձեռնությամբ եւ ստեղծագործական միությունների ղեկավարների ու ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի էր ունեցել մամուլի ասուլիս եւ ստեղծագործական հավաք, որի ընթացքում դատապարտվել էր ՀՀ ԳԱԱ-ի ապօրինի պահանջը՝ Մշակույթի հայկական ֆոնդին իր օրինական տարածքից հանելու մտադրությունը:

Ն. Ս.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակչության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լուրերի սենյակ / հեռ. 581841
Հասցեագրատիրություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Հասցեագրային շարասենյակ
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ընթացիկ

Կառիտալի շուկայի կայացման համար տասնամյակներ են պետք

Իսկ մինչ այդ բորսայում կվաճառվեն նաեւ պետական կարճաժամկետ պարտատոմսերը

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի (ՊԿՊ) առեւտուրն այսուհետեւ պետք է կատարվի Հայաստանի ֆոնդային բորսայում, ինչը հնարավորություն է տալիս արագահոսելու գործարքների թափանցիկությունը: Ներկայացնելով կառավարության հաստատած բորսայական առեւտրի զարգացման հայեցակարգը, տեղեկացրեց Արժեթղթերի հանձնաժողովի նախագահ Էդվարդ Մուրադյանը: Նա նշեց, որ պարտատոմսերի առեւտուրը մինչ այժմ կատարվում էր բանկերի, ավելի ճիշտ 4 խոշոր բանկերի միջոցով: Նրանք գործարքները կատարում էին մի համակարգով, որն, ըստ Էդվարդ Մուրադյանի, ավելի շուտ տեղեկատվական համակարգ էր, հետեւաբար չէր ապահովում գործարքների արագահով կնքումն ու կատարումը: Բացի այդ, տեղեկատվության տիրապետման առումով բանկերն ու բրոքերային ընկերությունները գտնվում են անհավասար վիճակում: Բորսան նաեւ հնարավորություն է տալիս երաշխավորված գործարքներ կատարել: Հանձնաժողովի նախագահի կարծիքով, ՊԿՊ-ների առուվաճառքը բորսա տեղափոխելով, արժեթղթերի երկրորդային շուկայի աշխուժացման հնարավորություն է ստեղծվում, նվազում է կեղծիքների լվացման հնարավորությունը: Նշվեց նաեւ, որ փաստաթղթի ստեղծմանը մասնակցել են ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունն ու Կենտրոնական բանկը:

«Ազգի»՝ «արդյոք արժեթղթերի շուկայի չկայանալու պատճառներն ավելի լուրջ չե՞ն եւ հետեւաբար որքանո՞վ է հավանական ՊԿՊ-ների վաճառքն այստեղ տեղափոխելով աշխուժացնել այս շուկան» հարցին ի պատասխան Էդվարդ Մուրադյանը համաձայնեց, որ կապիտալի շուկայի կայացմանը խանգարող ավելի լուրջ խոչընդոտներ կան: Դրանցից առաջինը տնտեսության սվերայնացումն է: Ընկերությունների ղեկավարները չեն ցանկանում լիովին բացահայտել իրենց գործունեությունը: Մեկ այլ խոչընդոտ է անտեղյակությունը, երբ մարդիկ իրենց միջոցները չեն տեղաբաշխում բաց բաժնետիրական ընկերություններում: Էդվարդ Մուրադյանն ընդունեց նաեւ այն փաստը, որ չեն տեղաբաշխում, որովհետեւ չեն վստահում: Նա, թվարկելով այդ խոչընդոտները, միաժամանակ նշեց, որ չի կարելի չօգտագործել որեւէ այլ հնարավորություն կապիտալի շուկայի զարգացման համար: Իսկ ընդհանրապես, հանձնաժողովի նախագահի հավաստմամբ, կապիտալի շուկայի կայացման համար կարիք չկա շտապել, դրա համար տարիներ եւ տասնամյակներ են անհրաժեշտ: Ներկայումս այստեղ սկզբունքային տեղաշարժեր չկան:

ԱՐԱ ՏՈՒՏԻԿՈՅԱՆ

Ճահճաբաժին վճարում են 25-ը

Ինչպես տեղեկացանք արժեթղթերի հանձնաժողովի նախագահ Էդվարդ Մուրադյանից, Հայաստանում գործող շուրջ 1300 բաց բաժնետիրական ընկերություններից իրենց բաժնետերերին շահաբաժին են վճարում ընդամենը 25-ը: Հանձնաժողովի նախագահը դրանցից կարողացավ հիշատակել միայն երկուսին՝ «Հայէկոնոմբանկին» եւ «Մաքուր երկաթի գործարանին»:

Ա. Մ.

Կստեղծվի՞ հավասար դաշտ ՀԴՄ-ների կիրառման համար

Համապատասխան օրենքի նախագիծը ներկայացված է Ազգային ժողով

Հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) կիրառումն ավելի արդյունավետ կլինի, երբ այստեղ հավասար դաշտ կարարվի: Այսինքն, երբ ՀԴՄ-ները կտեղադրվեն նաեւ այն տնտեսվարողների մոտ (օրինակ տոնավաճառներում), որոնք ներկայումս նման պարտավորություն չունեն: Պատասխանելով ՀԴՄ-ների կիրառման անարդյունավետության վերաբերյալ հարցին, երեկ ասաց հարկային ծառայության պետի տեղակալ Արմեն Ալավերդյանը: Նրա հավաստմամբ, այդ վայրերում հսկիչ-դրամարկղային մեքենաների տեղադրումը ժամանակի խնդիր է եւ համապատասխան օրենքի նախագիծն արդեն Ազգային ժողովում է: «Ազգի» հարցին, թե մի քանի տարի այդ օրենքը գտնվում է խորհրդարանում եւ ի վերջո ե՞րբ է գալու կյանքի կոչելու ժամանակը, Արմեն Ալավերդյանը պատասխանեց, որ «Առեւտրի իրականացման վայրի մասին» օրենքի նախագիծը, որտեղ նախատեսվում էր տոնավաճառներում ՀԴՄ-ների տեղադրումը, իսկապես երկու տարի առաջ էր ներկայացվել Ազգային Ժողով: Հետագայում առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունն այդ նախագծի փոխարեն ներկայացրեց «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքի նախագիծը, իսկ այս տարվա արդիլին կառավարությունը խորհրդարան է ներկայացրել նաեւ հարկային ծառայության մշակած «Հսկիչ-դրամարկղային մեքենաների մասին» օրենքի նախագիծը: Հարկային ծառայության պետի տեղակալը հույս հայտնեց, որ աշնանային նստաշրջանի ժամանակ այն կընդունվի: Նա նաեւ ընդունեց, որ ՀԴՄ-ների ներդրումը, որն սկսվել է 1998 թ., կիսաս մնաց, եւ դրանք տեղադրվեցին միայն խանութներում:

Արմեն Ալավերդյանը համակարծիք լինելով այն դիտարկմանը, որ կտրոնն առեւտրի օբյեկտներում սովորաբար չի տրամադրվում, միեւնույն ժամանակ նշեց, որ պահանջելու դեպքում հիմնականում տրվում է: Նա հայտնեց, որ անցյալ տարի հարկային ծառայության կողմից ՀԴՄ-ի կտրոնը չտրամադրելու պատճառով տնտեսվարող սուբյեկտները շուրջ 4800 անգամ տուգանվել են: Այս տարվա առաջին կիսամյակում այդ թիվը հասնում է 2000-ի:

Հսկիչ-դրամարկղային մեքենաների առնչությամբ վերոնշյալ հարցերի եւ դրանց պարզաբանումների առիթը կառավարության երեկ ընդունած երկու որոշումներն էին: Առաջինով սահմանվում էին ՀԴՄ-ների շահագործման եւ գրանցման կանոնները, որն, ըստ հարկային ծառայության ներկայացուցչի, թույլ կտա խուսափել տնտեսվարողների հետ առաջացող բոլոր տարաձայնություններից: Երկրորդ որոշմամբ, այն տնտեսվարողներին, որոնք ունեն շրջիկ վաճառակետեր, հնարավորություն է տրվում հայտ ներկայացնել, ստանալ եւ կիրառել հսկիչ-դրամարկղային մեքենաները: Իսկ ներկայումս շահագործման մեջ գտնվող վերջիններիս թիվը մոտ 15 հազար է:

Ա. Մ.

Թողեց պայծառ հետագիծ

Կյանքի 74-րդ տարում ինֆարկտից հանկարծամահ եղավ վաստակավոր մանկավարժ, գրող, լրագրող **Կարլեն Տիգրանի Սահակյանը:**

Կ. Սահակյանը ծնվել է Արագածոտն մարզի Ծաղկահովիտ գյուղում՝ մանկավարժի ընտանիքում:

Ավարտելով Երեւանի մանկավարժական համալսարանը՝ Կ. Սահակյանը 50 տարուց ավելի պատշտոնավարել է կրթության բնագավառում: Աշխատել է որպես տեսուչ հանրապետության պրոֆ. տեխնիկական կոմիտեում: Երեւանում լինելով միջնակարգ կրթօջախի, տեխ. ուսումնարանների տնօրեն եւ դասատու՝ ծավալել է բեղմնավոր աշխատանք: Նա մանկավարժական գործունեության ողջ ընթացքում իր հոգու ջերմությունն ու սերն անմնացորդ նվիրել է պատանիների ու աղջիկների՝ մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության վեհ գործին՝ սեր արթնացնելով նրանց հոգում դասավանդած հայոց լեզվի, գրականության, ոճաբանության եւ հոգեբանության առարկաների նկատմամբ, խորացնելով նրանց ինքնուրույն մտածելու եւ դատելու ունակությունները:

Կյանքի զարկերակին համընթաց իմաստավորված կյանքով ապրած վառ հայրենասեր, մանկավարժ-լրագրող Կարլեն Սահակյանի պայծառ հիշատակը երկար կմնա նրա հարյուրավոր ուսանողների, աշակերտների, բարեկամների ու իր սիրելի ընկերների շրջանում:

ՌՈԲԵՐՏ ԹՈՒԱՐՅԱՆ,
ՎԱՉԵ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ,
ԼԵՎՈՆ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ,
ԵՊՀ հոլեջի մանկավարժական
կոլեկտիվ

ՍԵՔՈՒՐՈՍ

«Սփյուռքի աղագան պայմանավորված է հայեցի դաստիարակությամբ»

Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքում անցյալ շաբաթ անցկացվեց «Հայեցի դաստիարակությունը սփյուռքում» թեմայով համասփյուռքյան համաժողով, որի մասին ավելի մանրամասն տեղեկացանք Անթիլիասի կաթողիկոսարանից մեզ ուղարկված հաղորդագրությունից: Ինչպես նշվում է, համաժողովն անցել է փոխադարձ հասկացողության մթնոլորտում, մասնակիցները դրսեւորել են հանձնառու մասնակցություն եւ լուրջ մտահոգություն հայտնել ճնշարկվող հարցերի վերաբերյալ: Ներկա են եղել ոչ միայն հայեցի դաստիարակության բնագավառում փորձառություն ու վաստակ ունեցողները, այլեւ սփյուռքի տարբեր հատվածների կրթության աշխատողները: Կողք-կողքի են հայտնվել ինչպես Ավստրալիայում ու Հալեպում կրթական գործին նվիրված մտակները, այնպես էլ Աթենքի ու Լոս Անջելեսի նույն շրջաններում ծառայողները, որոնք ինչ-ինչ պատճառներով տասնամյակներ շարունակ իրարից անջատ են գործել:

Հայեցի դաստիարակության ամբողջականությունը պահելու եւ ներդաշնակ զանազանությամբ արտահայտելու ձգտումը համագումարի ամենաշիրակաև երեւույթներից մեկն է եղել: «Այս դեմքը պետք է վերածվի մնայուն ընթացքի: Տագնապը պետք է վերածվի ծրագրի, ծրագիրը՝ կյանքի: Հայեցի դաստիարակությունը մեր ազգի ու հատկապես սփյուռքի հայության օրակարգի ամենահրատապ խնդիրներից մեկն է: Սփյուռքի ապագան պայմանավորված է հայեցի դաստիարակությամբ», համագումարի փակման ժամանակ ասել է Արամ Ա կաթողիկոսը: Նա նշել է, որ համագումարին պետք է հաջորդի ծրագրված գործընթաց՝ հայկական գաղութներում հայեցի դաստիարակությունը որպես առաջնահերթություն պահելու, ներգաղութային ու միջգաղութային ծիրում աշխատանքներն ավելի կազմակերպված, արդյունավետ ու հրապուրիչ դարձնելու համար: Համագումարում հնչած բոլոր զեկույցները կամփոփվեն առանձին գրքում, որը կտրամադրվի կրթության աշխատողներին եւ հայեցի դաստիարակությամբ հետաքրքրվող մտավորականներին:

Կաթողիկոսը նաեւ շեշտել է, որ Հայաստանն ու սփյուռքը պետք է մշակեն հայեցի դաստիարակության համապարփակ քաղաքականություն՝ ճշտելու այն հիմնական սկզբունքները, որոնք պետք է դառնան հայեցի դաստիարակության ըմբռնումների եւ համոզումների հիմքերը: Նա անհրաժեշտ է համարել հստակեցնել Հայաստանի դերն այդ ուղղությամբ: Իսկ սփյուռքը պետք է մշակի հայեցի դաստիարակության մի ընդհանուր ուղեգիծ՝ նկատի ունենալով ներկա աշխարհի հարափոփոխ պայմաններն ու մարտահրավերները:

Հայագիտական նյութերով հարուստ նոր դասագրքեր ունենալու եւ մանկապատանեկան գրականությանը զարկ տալու հրամայականի թելադրանքով Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությունն ու Գալուստ Գյուլբենկյան հիմնարկությունը որոշել են միասնաբար հրատարակել նոր դասագրքեր սփյուռքի բոլոր դպրոցների համար:

Համագումարը 2005 թվականը հայտարարել է «Հայեցի դաստիարակության տարի», որպեսզի հայ եկեղեցին, կազմակերպությունները ու միությունները լրջորեն անդրադառնան հայեցի դաստիարակության հրամայական ու կենսատու անհրաժեշտությանը:

50 հազար դոլար ի նպաստ հայկական ոսկրուղեղի հիմնադրամի

Օգոստոսի 6-ին Գլենդելի «Հիլթոն» հյուրանոցի հյուրասիրությունների մեծ դահլիճում 350-ից ավելի մասնակիցների ներկայությամբ տեղի ունեցած երրորդ տարեկան խնջույքի ընթացքում 50 հազար դոլար է հանգանակվել ի նպաստ հայկական ոսկրուղեղի հիմնադրամի, տեղեկացնում է այդ առթիվ հրատարակված հաղորդագրությունը: 2000 թ. դեկտեմբերից ավելի քան 8 հազար հայեր են արձանագրվել ոսկրուղեղի հայկական ռեեստրում: Տարդ փոխպատվաստման կարիք ունեցող 332 հիվանդներից 172-ի համար գտնվել են համապատասխան հնարավոր տարբերակներ, իսկ 4 պատվաստումներ արդեն իսկ կատարվել են Լոս Անջելեսում, Լեհաստանում, Իտալիայում եւ Գերմանիայում: 1999 թ.՝ իր ստեղծման օրից ոսկրուղեղի ռեեստրը՝ հայկական բարեգործական հիմնադրամը, հիմնել է հյուսվածքների տեսակավորման լաբորատորիաներ Երեւանում եւ Գլենդելում (Կալիֆոռնիա), որոնց ղեկավարներն են հիմնադրամի գործադիր տնօրեն Սեսակ Ավագյանը եւ նախագահ Ֆրիդա Զորդանը համապատասխանաբար: Երկու լաբորատորիաներն էլ կահավորված են արդիական սարքավորումներով եւ համալրված են բարձրորակ աշխատակիցներով: Լոս Անջելեսում հավաքագրման կենտրոնը գտնվում է Գլենդելի «Մեմորիալ» հիվանդանոցում:

Վերոհիշյալ հավաքի ընթացքում նախագահ Ֆրիդա Զորդանի եւ հանդիսավար Մայքլ Մահդեսյանի ձեռամբ 5 մրցանակ է շնորհվել պատվավոր նախագահ եւ Հայաստանի առաջին տիկին Բելլա Քոչարյանին՝ որպես տարվա կնոջ, որն առաջին դոնորն է եղել եւ շարունակում է իր նվիրվածությունը ծրագրին, Դիանա Արքունյանին՝ որպես տարվա կամավորի, «Վարդանի դուստրերին»՝ որպես տարվա կազմակերպության, Արմեն Ջանյանին՝ որպես տարվա մարդու եւ Դարիո Ֆրոմերին՝ որպես տարվա օրենսդիրի: Բոլոր 5 մրցանակակիրներին ողջունել են Գլենդելի քաղաքապետ Բոբ Յուսուֆյանը, ներկա կոնգրեսականներ եւ սենատորներ:

Պուտինի Ռուսաստանի, հրեաների եւ... Տավուշի մասին

Հարցազրույց «Ազգ»-ի Մոսկվայի թղթակից Ռուբեն Հայրապետյանի հետ

Օրերս Երեւանում էր Մոսկվայում «Ազգ»-ի թղթակից Ռուբեն Հայրապետյանը, որ եկել էր մի քանի օր իր հայրենի Տավուշում (Շամշադին) հանգստանալու: Թերթի գլխավոր խմբագրի հետ նրա ընդարձակ զրույցից առանձնացնում ենք հետեւյալ հատվածները իսկ ներքեւում զետեղում նրա ակնարկը Բերդի միջնակարգ դպրոցի մասին:

- Պուտինի վերընտրությունից հետո էական փոփոխություններ նկատվո՞ւմ են Ռուսաստանի կյանքում:

- Չէի ասի: Սպասումները մեծ էին, թվում էր Պուտինը երկրորդ իշխանահատվածում լրիվ կհրաժարվի «ելցինիզմից» ու նրա կապանքներից եւ կգործի ավելի սրընթաց ու վճռական: Ինչ-որ փոփոխություններ, անշուշտ, տեղի են ունենում, բայց արմատական տեղաշարժեր չկան: Հարկ չկա այստեղ կատարել սոցիալ-քաղաքական «խոր» վերլուծություններ: Բավական է ասել, որ կյանքը գնալով ավելի ու ավելի է թանկանում:

- Իսկ մարդկանց անվտանգության իմաստո՞վ:

- Ես մի անգամ այդ հարցը տվեցի ՌԴ ՆԳՆ հայազգի մի բարձրաստիճան սպայի, որը երկար տարիներ աշխատել է կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի ծառայություններում: Հիմա էլ վիճակն այնքան բարվոք չէ, ասաց նա, բայց ելցինյան տարիների համեմատ «դրախտ» է: Մտնում էինք տներ, ասաց նա, որտեղ ընտանիքի բոլոր անդամները, ահել թե ջահել, ուղեղներն էին թափված ամենուրեք:

- Եվ ի՞նչ ես կարծում, Պուտինը չի՞ ուզում, թե չի՞ կարողանում հասնել արմատական փոփոխությունների:

- Կարծում եմ ավելի շատ երկրորդը: Գիտես, Ռուսաստանի զարգացմամբ թերեւս շահագրգռված է միայն այդ երկրի ժողովուրդը: Ուրիշները, լինի դա Ամերիկան թե Եվրոմիությունը, ոչ թե պատրաստ են «աջակցելու» Ռուսաստանի բարգավաճմանը, այլ ամեն ինչ անում են, որ նրան թուլացնեն, մեկուսացնեն, քայքայեն, տեսնեն նրան միայն որպես հումային հավելված ու շուկա: Ոչ ավելի: Մտիր Մոսկվայի որեւէ խանութ՝ ապրանքների գերակշիռ մասը, եթե ոչ բոլորը, արտասահմանյան է: Պուտինի շրջապատից հանդիպումները Արեւմուտքի ղեկավարների հետ արտացոլում են երեւույթի սոսկ արտաքին փայլը, տնտեսական արդյունքներն առավել քան համեստ են: Եվ հետո, որ թերեւս ամենագլխավորն է, Պուտինին մասնաբայնորեն հակազդում է ներքին ընդդիմությունը, ընդսմին ոչ թե քաղաքական, այլ էթնիկական:

- Նկատի ունես հրեաների՞ն:

- Անշուշտ:

- Դու չե՞ս ուռճացնում նրանց դերը:

- Սա բնավ էլ իմ անձնական կարծիքը չէ: Երեւի գիտես, թե ինչ է քայքայարել Իսրայելի վարչապետ Շարոնը: Հրեա ժողովուրդը, ասել է նա, վերահսկում է ԱՄՆ-ը, եւ ամերիկացիները դա գիտեն: Ահա եւ, տիրելով աշխարհի գերհզոր պետությանը՝ Իսրայելի գլխավոր հովանավորին, ինչո՞ւ պիտի հրեաները հակակշիռ ստեղծեն նրան առհասարակ, իսկ տվյալ դեպքում՝ ի դեմս Ռուսաստանի: Բնականաբար նրանք չեն մոռացել նաեւ Խորհրդային Միության արաբամետ քաղաքականությունը: Հրեաներն այսօր տնօրինում են նաեւ Ռուսաստանի ազգային հարստությունը ամենալայն իմաստով. դա վառ վկայությունն է նաեւ «Ֆորբս» ամսագրի Ռուսաստանի 100 մեծահարուստների ցուցակը: Եվ այդ մարդիկ ոչ միայն ոչինչ չեն անում Ռուսաստանի տնտեսությունը ոտքի կանգնեցնելու, ժողովրդի կենսամակարդակը բարձրացնելու համար, այլ ընդհակառակը, ըստ ամենայնի խոչընդոտում են այդ գործընթացին: Պատահական՞ է, որ Չուկոտկայի նահանգապետ Ռոման Աբրամովիչը ճանաչվել է Բրիտանիայի ամենահարուստ մարդը: Չմոռանանք, որ ինչպես աշխարհում, այնպես էլ Ռուսաստանում հրեաներին է պատկանում նաեւ աշխարհանվաճման մյուս կարեւոր գործոնը՝ ինֆորմացիան: Որ հրեաները կառավարում են աշխարհը, դա միֆ չէ, այլ իրողություն:

- Այդ դեպքում ինչո՞ւ Պուտինը վարչապետ նշանակեց էթնիկ հրեայի:

- Ֆրադկովին դարձնելով երկրի երկրորդ կարեւոր պաշտոնյան, Պուտինը նախ եւ առաջ փակեց իրեն անտիսեմիտիզմի մեջ մեղադրողների (հրեաների) բերանը: Հետո կրճատումների ու նոր նշանակումների միջոցով կառավարությունը թեթեւացրեց այդ էթնիկական բեռից: Ֆրադկովը վառ անհատականություն չէ եւ, հետեւաբար, դյուրին կառավարելի է: Անմիջականորեն առճակատել հրեաների հետ՝ խիստ վտանգավոր է:

- Իսկ ի՞նչ վիճակում է ռուս գործոնը:

- Ցավոք սրտի՝ թմրած վիճակում: Թվում էր Պետդումայում երկու հրեամետ խմբակցությունների՝ «Յաբլոկոյի» եւ աջ ուժերի խայտառակ պարտությունից հետո գոնե օրենսդիր մարմնում կուժեղանա ռուսամետ հոսանքը: Բայց ոնՀ է: Հայրենասիրական «Ռոդինա» դաշինքը հենց առաջին օրից սկսեց քայքայվել:

- Լավ, դառնանք, ինչպես Ֆրանսիացիները կասեին, մեր ոչխարներին: Ի՞նչ դեր է խաղում ռուսահայությունը այդ երկրի կյանքում:

- Եվ դու այդ հարցը տալիս ես հրեաների մասին խոսակցությունից հետո՞: Այդ դեպքում դժվարանում եմ ասել, թե ինչ դեր... Մենք միասնական ազգ չենք նույնիսկ գլոբալ հարցերում: «Ֆորբսի» հիշյալ ցուցակում մի հայ անգամ չկար: Պարադոքսալ բան. վրացիները, որ բացահայտ հակառուսական քաղաքականություն են վարում, թերեւս ավելի լայնորեն են ներկայացված Ռուսաստանում իրենց օլիգարխներով, քաղաքական գործիչներով, հայտնի երգիչներով, նկարիչներով, կինո-թատերական գործիչներով եւ այլն:

- Այդտեղերձ հայերից ո՞ւմ կառանձնացնեիր:

- Անշուշտ, ամենաերեւացողը, ամենաակտիվն ու ամենաազդեցիկը Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանն է: Վերջին տարիներին առաջին պլան է մղվում նաեւ հայտնի բանկիր, «Ռոսգոսստրախի» նախագահ Ռուբեն Վարդանյանը: Ասում են շատ բանիմաց, կիրթ, հեռանկարային անձնավորություն է, շատ հայասեր: Լավ համարում ունի Ռուսաստանի բանկերի ասոցիացիայի նախագահ Գարեգին Թոսունյանը: Սակայն այնքիսի հայեր, ինչքիսիք ունեինք խորհրդային տարիներին, չկան: Հիշենք Միկոյան եղբայրներին, մարշալներ Բաղրամյանին ու Բաբաջանյանին, ադմիրալ Իսակովին, Արամ Խաչատրյանին, Տիգրան Պետրոսյանին, Առնո Բաբաջանյանին...

- Իսկ ի՞նչ կասես ՌԴ կառավարության նախարարներ Սերգեյ Լավրովի եւ Միխայիլ Զուրաբովի «հայկականության» մասին:

- Երկուսն էլ հայկական արյուն ունեն, բայց դա բացարձակապես ոչինչ չի նշանակում: Դու գիտես, որ ես կտրականապես դեմ եմ զոռով հայացման տխմար միտումին: Մարդը չի ուզում, որ իրեն հայ համարեն, իսկ նրան պարտադրում են, թե՝ դու հայ ես: Հետո՞: Ֆիլիպ Կիրկորովի նման սահակին էլ էին Հայաստանում հայացրել: Տեսանք արդյունքը: Պետք է հասկանալ մի պարզ պարագա: Արտերկրում կարեւորը ոչ թե արյան զուտ ֆիզիոլոգիական գործոնն է, այլ կողմնորոշումը՝ մարդն ինքն իրեն համարո՞ւմ է տվյալ ազգային հանրության անդամ, թե՞ ոչ: Եթե այո, ապա նա ինչ-որ լավ բան կանի Հայաստանի կամ հայության համար, իսկ եթե ոչ, ընդունակ կլինի նույնիսկ սնորության իր «ոչ հայկական» ծագումը հաստատելու համար: Ես էժանագին եմ համարում նաեւ Սահակաշվիլուն թե Ժվանիային հայացնելու մարզանքները: Հավատացեք, եթե Վրաստանի ներկայիս ղեկավարը տարալվի, վրացիները դա կվերագրեն նրա «ոչ ճիշտ» էթնիկական ծագմանը, ինչն առաջ կբերի նոր հակահայկական դրսեւորումներ: Այնպես որ եկեք չշտապենք:

- Ամեն ամառ գալով Հայաստան, ի՞նչ փոփոխություններ ես նկատում:

- Էական դրական փոփոխություններ նկատվում են միայն Երեւանում: Իսկ երբ դուրս ես գալիս մայրաքաղաքից... Մանկության ընկերոջս հետ մեկնեցինք մեր հայրենի Շամշադին: Երեւան-Իջեւան մայրուղին այն լավ տարիներին քաղաքային բանուկ փողոց էր հիշեցնում, այնքան շատ էին մեքենաները: Հիմա դրանք հատուկենտ են երեւում: Լեռնային գյուղերից մեկով անցնելիս, տեսնելով նրա հիրավի «խուլ» վիճակը, մարդկանց թշվառ տեսքը, դառնությամբ ասացի՝ հայերս վերադարձել ենք միջնադար: «Խոր միջնադար»՝ նույնքան դառնությամբ «շտկեց» թե լրացրեց ընկերս: Բայց ես գալիս եմ այն համոզմանը, որ մարդիկ այստեղ դժգոհում են ոչ այնքան իրենց անբարենպաստ վիճակից, որ ինքնին հասկանալի է, որքան սոցիալական անարդարությունից, պաշտոնավորների կամայականություններից ու դրանց դեմ իրենց անզորությունից: Ռուսաստանի թերթերից մեկում ունեցած իր հարցազրույցում Հայաստանի նախագահը կտրականապես մերժել էր կոռուպցիայի դեմ պայքարի վրացական տարբերակը: Իսկ ո՞վ ասաց, որ ուրիշ տարբերակներ չկան:

Դուք արժանավոր մարդիկ եք

Երկար տարիներ չէի եղել իմ հայրենի կրթօջախում՝ նախկին Շամշադինի շրջանի Բերդ ավանի միջնակարգ դպրոցներից մեկում: Այն տարիներին դա բարձրակարգ ուսումնական հաստատություն էր, որի շրջանավարտների մեծ մասն ուսումը հաջողությամբ շարունակում էր հանրապետության բուհերում ու տեխնիկումներում: Մոսկվայից այցելելով ծննդավայրս, մեծ ցանկություն առաջացավ լինել այնտեղ, քայլել միջանցքներով, նստել աշակերտական նստարանին... Բայց մեր դպրոցը ես չգտա, պարզապես չկար. երկրաշարժը շարքից հանել էր: Նրա տեղը բարձրացել էր մի նոր, ժամանակակից համալիր: Տնօրեն Արթուր Մելիքյանի եւ ռազմագիտության ուսուցիչ Հովիկ Շառյանի հետ ծանոթանում ենք «նոր» դպրոցին, որը ոչնչով չի հիշեցնում նախորդին. լուսավոր, հագեցած դասարաններ, ընդարձակ միջանցքներ, կոյուղի, ջեռուցում, համակարգիչներ... Իսկական «քաղաքի» դպրոց: «Հնին» հիշեցնում է նրանով, որ չի կորցրել բարձրակարգ ավանդները:

- Եթե այստեղ գայիք մի քանի տարի առաջ, ապա բոլորովին այլ պատկեր կտեսնեիք, ասում է տնօրեն Մելիքյանը: Ադրբեջանի հետ պատերազմի ժամանակ մեր դպրոցը հրետակոծվել էր: Ինչպես ասում են, մի կերպ յոլա էինք գնում: Եվ այդ ոչ դյուրին տարիներին մեզ անգնահատելի օգնություն ցույց տվեց մեր հայրենակից, բիզնեսմեն ու բարերար Վիկտոր Հայրապետյանը:

Պատմում է Սոչիի «Նեւա ինտերնեշնլ» հյուրանոցային համալիրի գլխավոր տնօրեն Վ. Հայրապետյանը:

- Մեր ֆիրման ռուս-ամերիկյան է, իսկ ամերիկյան կողմի գործընկերներս բոսնոնահայեր են՝ Էդուարդ Շուշանյանը եւ Զեկ Մեծոյանը: Ես նրանց շատ էի պատմել մեր գողտրիկ լեռնաշխարհի, Ադրբեջանի հետ սահմանամերձ լինելու բերումով բաժին հասած դժվարությունների մասին: 1996 թվականից Շուշանյանն ամեն տարի որոշակի գումար էր հատկացնում դպրոցին: Իսկ երկու տարի առաջ երկուսին էլ հրավիրեցի Բերդ: Անկարելի է չսիրահարվել այդ անտառածածկ լեռնային երկրամասին, եթե նույնիսկ եկել ես Բոսնիի պես շքեղափայլ մեգապոլիսից: Բայց եւ հնարավոր չէ չնկատել բազում կենսախնդիրները: Իսկ երբ նրանք իրենց աչքով տեսան հրետակոծված դպրոցը, նրա անմխիթար վիճակը, որոշեցին լուրջ նպաստ բերել նորացման գործին:

Զեկ Մեծոյանը եւ Էդվարդ Շուշանյանը Բերդի միջնակարգ դպրոցում:

Կոլեկտիվի հետ քննարկելով շահագրգիռ հարցերը եւ կազմելով հիմնանորոգման ծրագիր, բոսնոնահայերը վերադառնում են Ամերիկա եւ կազմակերպում դրամահավաք: Նվիրատվության գործին մասն են ունեցել նաեւ ոչ հայեր: Շուշանյանը զավեշտով պատմել է, որ մի անգամ, գոլֆ խաղալով մի ամերիկացու հետ, պայմանավորվել են, որ պարտվողը 1000 դոլար է հատկացնում... Բերդի թիվ 3 դպրոցին: Տանուլ տալով խաղը, ամերիկացին գումարը խոնարհաբար նվիրաբերում է բնականաբար իր համար կորած-մոլորված մի երկրամասի կրթական հաստատությանը:

- Երբ մենք ստացանք հանգանակված 30 հազար դոլարը, շարունակում է դպրոցի տնօրենը, որին, ի դեպ, տավուշցու պատվախնդրությամբ էապես մասնակցել էր նաեւ մեր երբեմնի շրջանավարտ Վիկտոր Հայրապետյանը, մինչեւ նոր ուսումնական տարին շատ քիչ ժամանակ էր մնացել: Բայց ստանալով քաղաքապետ Անդրանիկ Շառյանի մեծ աջակցությունը, թափով գործի անցանք: Վերանորոգվեցին դասասենյակները՝ համալրվելով նոր գույքով, կարգի բերվեց տանիքը, ապակեպատվեցին երկփեղկ պատուհանները, լուծվեց կոյուղու հարցը, լրիվ փոխվեց էլեկտրահամակարգը, կառուցվեց ունիվերսալ կաբսայատուն, որն իր տեսակի մեջ միակը լինելով քաղաքում՝ ապահովում է շուրջօրյա ջերմություն, մոռացության մատնելով ծխամուղ վառարանները: Դպրոցն առաջին անգամ ձեռք բերեց համակարգիչներ: Ամեն ինչ ներկվեց, նորացավ, գեղեցկացավ:

Տեղացիները սրամտում են, ծիծաղելով ասում է ուսուցիչներից մեկը, որ գրեթե տեսարժան վայր է դարձել դպրոցին կից ամերիկյան ոճով կառուցված... զուգարանը՝ բոլոր հարմարություններով օժտված գերմաքուր օբյեկտը:

Անցյալ տարվա սեպտեմբերին նորաստեղծ դպրոցը կազմ ու պատրաստ դիմավորեց իր հովանավորներին: Պարոնայք Շուշանյանն ու Մեծոյանը գոհ էին իրենց բարերարության կենդանի արդյունքներից, հոյված եզակի ջերմ ընդունելությունից. ծաղիկներ, երախտագիտության անկեղծ խոսքեր, աշակերտների բազմաթիվ շնորհակալական նամակներ: Իսկ այդ առթիվ կազմակերպված հյուրասիրության ժամանակ հյուրերի առջեւ դրվեցին Տավուշ գետի ձուկը, անտառի որսամիսը, այգու մեղրը, շուշանի թթուն, մոշի մուրաբան եւ, իհարկե, սեղանի զարդը՝ հոնի ու տանձի օղին:

Ամեն ինչ մե՛ռն է, վայելե՛ք, դուք արժանավո՛ր մարդիկ եք, ասում էին հյուրընկալողները: Մենք կշարունակենք մեր սկսած գործը, խոստանում էին հյուրընկալվողները:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ,
Մոսկվա-Բերդ

Իլհամ Ալիեւի գերմանական հումանիզմը

«Տարբեր ազգեր են ապրում Ադրբեջանում, հայերը նույնպես կարող են ապրել Լեռնային Ղարաբաղում»

Ադրբեջանի նախագահը, պարզվում է, ոչ միայն խաղամոլ է, կնամոլ ու ռազմատենչ, այլեւ հումանիստ: Ընդ որում, Իլհամ Ալիեւն իր հումանիզմի մասին խոսել է Գերմանիայում եւ, որ անակնկալ էր, նկատի է ունեցել հայերին: «Տարբեր ազգեր են ապրում Ադրբեջանում, հայերը նույնպես կարող են ապրել Լեռնային Ղարաբաղում», ասել է Ալիեւը Բեռլինում, կանցլեր Գերհարդ Շրյոդերի հետ համատեղ մամուլի ասուլիսում: Ալիեւն ասել է, որ դեմ չէ հայերի՝ Ադրբեջանում եւ Լեռնային Ղարաբաղում բնակվելուն, բայց պայմանով, որ նրանք ենթարկվեն Բաքվին:

Նկատենք, որ Ադրբեջանի ողջ հայ բնակչությունը տեղահանվել է մշտական բնակավայրերից մինչեւ ղարաբաղյան պատերազմը, այսինքն՝ ռազմական գործողությունների պատճառով չէ, որ հայաթափվել են Ադրբեջանի բոլոր բնակավայրերը: Ալիեւը Գերմանիայում սոփեսաբար զգուշացրել է, որ միլիոնավոր հայեր են բնակվում աշխարհի տարբեր երկրներում եւ ինչ կլինի, եթե նրանք էլ ինքնորոշման պահանջ ներկայացնեն: «Միայն պատկերացրեք, թե այդ դեպքում աշխարհի քարտեզի վրա քանի նոր հայկական պետություններ կհայտնվեն», Ալիեւի խոսքերը մեջբերում է «Դոյչ պրես» գործակալությունը:

Իլհամ Ալիեւն առաջին պաշտոնական այցն է կատարել Գերմանիա: Կանցլեր Շրյոդերը, ադրբեջան-գերմանական փաստաթղթերի ստորագրման արարողության ավարտին ասել է. «Կարող եմ ասել, որ Գերմանիան, ինչպես նախկինում, այսօր էլ Ադրբեջանի գործընկերն է, ճանաչել եւ ճանաչելու է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Նախագահ Ալիեւը եւ ես կարծում ենք, որ հայ-ադրբեջանական, Լեռնային Ղարաբաղի խնդիրը պետք է կարգավորվի խաղաղ ճանապարհով»:

Ադրբեջանի նախագահը կրկնել է, որ Հայաստանն արդեն ձեռք է բերել անկախություն, եւ Լեռնային Ղարաբաղի հայերը չեն կարող ինքնորոշվել, քանի որ Հայաստան անունով պետություն գոյություն ունի: «Հայաստանը գրավել է Լեռնային Ղարաբաղի շրջանը եւ շրջակա յոթ ադրբեջանական շրջաններ: Քանի դեռ Հայաստանի զինված ուժերը դուրս չեն բերվել գրավյալ հողերից, հակամարտությունը հնարավոր չէ կարգավորել», ասել է Ալիեւը:

Ալիեւի «ղարաբաղյան մարտավարությունը» պարզ է: Դրսում, հատկապես եվրոպական երկրներում, Ադրբեջանի ղեկավարը ներկայանում է խաղաղասերի եւ զոհի կերպարով, իսկ հանրապետության ներսում, հատկապես զինվորական որեւէ արարողության ժամանակ, սպառնում է պատերազմով գրավել Լեռնային Ղարաբաղը, եթե հակամարտության կարգավորման խաղաղ բանակցություններն արդյունքներ չտան: Ավելին, Ադրբեջանի բարձրաստիճան զինվորականները ոչ միայն հրապարակավ հայտարարում են Ղարաբաղը, այլեւ ամբողջ Հայաստանը գրավելու մասին: Այսպես, հենց վերջերս պաշտպանության նախարարության մամուլի խոսնակ Ռամիզ Մելիհովը կարծիք հայտնեց, թե 25–30 տարի հետո Հարավային Կովկասում Հայաստան անունով պետություն չի լինի, քանզի Հայաստանը ձեւավորվել է ադրբեջանական պատմական տարածքներում, եւ վաղ թե ուշ դրանք անցնելու են Ադրբեջանի հսկողության տակ:

Այսօրվա դրությամբ հայկական ուժերը վերահսկում են վարչականորեն Ադրբեջանին պատկանող հինգ շրջաններ ամբողջությամբ եւ երկուսը՝ մասամբ, կամ հարեւան հանրապետության տարածքի մոտ ութ տոկոսը: Իր հերթին, Ադրբեջանը 1991–94 թթ. ռազմական գործողություններով կարողացել է գրավել Լեռնային Ղարաբաղի տարածքի մոտ 15 տոկոսը Շահումյանի, Մարտակերտի եւ Մարտունու շրջաններում:

ԹՈՒԹՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հրեա լրագրողը հանդիմանում է Իսրայելին եւ Թուրքիային

«Ինտերնեշնլ հերալդ տրիբյուն» հայտնի օրաթերթն իր օգոստոսի 20-ի համարում տպագրել է հրեա հեղինակավոր լրագրող Ջեյ Բուշինսկու «Հայոց ցեղասպանությունը: Դիմագրավեք պատմության սրաճմլիկ ճշմարտությանը» խորագրով հոդվածը, որտեղ նա մասնավորապես գրում է. «Օսմանյան թուրքերի 89 տարի առաջ իրագործած սպանդը, որի ընթացքում 1,5 մլն հայեր սպանվեցին կամ տեղահանվեցին, դարձավ ողբերգական նախերգանքը նացիստների սանձազերծած Հոլոքոստի: Եվրոպայի հրեաներին ոչնչացնելու Հիտլերի որոշումը հենվում էր հայոց ողբերգության հանդեպ աշխարհի ցուցաբերած անտարբերության վրա: Հիտլերի հայտնի խոսքերը, թե՝ ո՞վ է այսօր խոսում հայերի ոչնչացման մասին, արդարացիորեն ամրագրված են Վաշինգտոնում Հոլոքոստի հուշահամալիրի պատերից մեկի վրա»: Նա այնուհետեւ հիշեցնում է, որ զանազան «շահագրգիռ խմբակցություններ, ներառյալ հրեական, մոլորության մեջ ընկնելով կամ պատեհապաշտական նկրտումներից ելնելով», խարդախություն էին ծավալել ընդդեմ Հայոց ցեղասպանության կոնգրեսական բանաձեւի՝ պարզապես Թուրքիային չվիրավորելու համար: Մինչդեռ երբ վերջերս Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հրեաներին մեղադրեց ահաբեկչության մեջ, «ոչ Իսրայելը, ոչ էլ անդրկովկասյան հրեական կազմակերպությունները չհամարձակվեցին Էրդողանին հիշեցնել, որ մարդկության դեմ ոճիրներ գործած երկրի առաջնորդներն ավելի ծիծաղելի կվարվեին, եթե զերծ մնային ուրիշներին դասեր տալուց», գրում է Բուշինսկին արդարացի զայրույթով:

Նա ցավ է արտահայտում, որ Իսրայելը «ժամանակակից առաջնահերթ խնդիրներին գերակայություն տալով մոռանում է բարոյական պարտավորությունները»: «Երբ Իսրայելում պատրաստվում էին ցուցադրել Հայոց ցեղասպանության վերաբերյալ վավերագրական մի ֆիլմ, արգելքներ խարարությունը միջամտեց՝ թուրքերին չվիրավորելու նկատառումներով», հիշեցնում է նա՝ կծու հեգնանքով ավելացնելով. «Կեղծ բարենամությամբ ավելացնելով. «Կեղծ բարենամությամբ ավելացնելով, որ այն երբեք տեղի չի ունեցել»:

Հայերս պարտավոր ենք գնահատել Ջեյ Բուշինսկու հանդգնությունը եւ հանուն արդարության ու ճշմարտության գրիչ վերցնելը: Առաջինի անհատներ եւ կազմակերպություններ շարունակելու են հետապնդել Իսրայելի եւ Թուրքիայի ղեկավարներին, մինչեւ վերջիններս դադարեն սրբապղծել մեկուկես միլիոն հայ անմեղ զոհերի հիշատակը:

ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ,
«Կալիֆորնիա կուրիեր»

Նավթը կտրուկ էժանացել է

Նավթի պայմանագրային գներն աշխարհի խոշորագույն բորսաներում զգալիորեն իջել են: Լոնդոնի բորսայում «Բրենտ» մակնիշի նավթի մեկ բարելի գինը սայում «Բրենտ» մակնիշի նավթի մեկ բարելի գինը սայում «Բրենտ» մակնիշի նավթի մեկ բարելի հոկտեմբերյան պայմանագրային գինն իջել է, հասնելով 40,68 դոլարի: Նյու Յորքում մեկ բարելն էժանացել է 1,74 դոլարով, օգոստոսի 25-ի երեկոյան արժենալով 43,47 դոլար:

Փորձագետները նավթի համաշխարհային շուկայում դիտվող վերջին երեւույթները բացատրում են ԱՄՆ-ում նավթամթերքի գների կտրուկ անկմամբ եւ իրանյան նավթի արտահանումների կայունացմամբ, ինչը զգալի չափով հանգստացրել է նավթավաճառ խոշոր ընկերություններին:

ԱՄՆ էներգետիկայի նախարարությունը հաղորդում է, որ երկրում թեեւ նավթի պաշարները կրճատվել են, բայց բենզինի պաշարները մնացել են նախկին մակարդակի վրա:

Այաթոլլահ Սիստանին առաջարկել է կարգավորման ծրագիր

Գնդակոծվել է Կուֆայի գլխավոր մզկիթը

Շիա մահմեդականների առավել ազդեցիկ հոգեւոր առաջնորդներից մեկը՝ այաթոլլահ Ալի ալ Սիստանին ներկայացրել է իրանյան Նաջաֆ սրբազան քաղաքի հրադադարի խաղաղ կարգավորման ծրագիր:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ ծրագրով նախատեսվում է Նաջաֆ եւ Կուֆա քաղաքներում զինաթափել բոլոր զինված կազմավորումները, Նաջաֆից դուրս բերել բոլոր օտարերկրյա զորքերը եւ քաղաքում անվտանգության ու իրավակարգի վերահսկողությունը հանձնել իրանյան ոստիկանությանը: Այդ մասին լրագրողներին հայտնել է ալ Սիստանիի ներկայացուցիչ Համեդ ալ Խաֆաֆը:

Ըստ ծրագրի, Իրանի կառավարությունը պետք է փոխհատուցում վճարի Նաջաֆի եւ Կուֆայի այն բնակիչներին, որոնք վերջերս այնտեղ տուժել են ռազմական գործողություններից:

Ալի ալ Սիստանին չորեքշաբթի օրն Իրաք է մեկնել Լոնդոնից, որտեղ ստի վիրահատության էր ենթարկվել: Նույն օրն իր շախմբով նա ժամանել է Բասրա: Երեկ տասնյակ հազարավոր իրաքցիների ուղեկցությամբ նա շարժվել է դեպի Նաջաֆ, որպեսզի վերջ դնի ամուսամբների եւ ամերիկյան զորքի կատաղի մարտերին:

«Ալ Ջազիրա» հեռուստաընկերության տվյալներով, երեկ գիշեր ամերիկացիները հրետակոծել են Նաջաֆի մի շարք շրջաններ: Ամերիկյան օդուժը հարվածներ է հասցրել «Մահդիի բանակի» դիրքերին: Գնդակոծությունից զոհվել է 3 խաղաղ բնակիչ:

Միաժամանակ հաղորդվում է, որ գնդակոծվել է Նաջաֆից արեւելք ընկած Կուֆա քաղաքի գլխավոր մզկիթը: Շիա հոգեւորականները BBC-ի թղթակցին հայտնել են, որ պայթյունի հետեւանքով կան տասնյակ զոհեր եւ վիրավորներ: Բժիշկների տվյալներով, զոհվել է 25 մարդ: Ենթադրվում է, որ մզկիթը գնդակոծվել է ականներից:

Կուֆայի մզկիթն այն գլխավոր վայրն է, որտեղ ուրբաթ օրերին քարոզ է կարդում շիա արմատականների հոգեւոր առաջնորդ Մոքթադա ալ Սադրը:

Թուրքական երկու ընկերություններ հեռանում են Իրաքից

Թուրքական երկու ընկերություններ երեկ հայտարարել են, որ սկսում են Իրաքից դուրս բերել իրենց աշխատակիցներին, որպեսզի փրկեն նախօրեին առեւանգված իրենց աշխատակիցներին: Այդ մասին հաղորդում է թուրքական «Անատոլիա» լրատվական գործակալությունը:

Խոսքը «Ուլուել» եւ «Սա-Ռա» ընկերությունների մասին է, որոնց աշխատակիցներից երկուսը՝ ինժեներ-էլեկտրիկներ Աբդուլլա Օզդենիրը եւ Ալի Դասկինը իրաքցի ծայրահեղական խմբավորումներից մեկի գերության մեջ են: Այդ խմբավորումը չորեքշաբթի օրը տարածել էր վերջնագրային հայտարարություն, սպառնալով մահապատժի ենթարկել երկու պատանդներին, եթե նրանց գործատու թուրքական ընկերությունները 72 ժամվա ընթացքում չդադարեցնեն գործունեությունն Իրաքի տարածքում:

Թուրքական NTV հեռուստաընկերությունը ցուցադրել էր երկու պատանդներին՝ շրջապատված դիմակավոր զինյալներով: Տեսագրության մեջ պատանդները թուրքական երկու ընկերություններին խնդրել էին «հնարավոր ամեն ինչ անել» իրենց ազատելու համար:

Առայժմ չի հաղորդվում, թե Իրաքի որ մասում են առեւանգվել երկու թուրք պատանդները:

Նախընտրական նոր սկանդալ ԱՄՆ-ում

Նախագահ Ջորջ Բուշի նախընտրական շտաբի իրավաբաններից մեկը հրաժարական է տվել, քանզի պարզվել է, որ գործակցել է նախագահության դեմոկրատ թեկնածու Ջոն Քերիի մարտական ծառայությունները նսեմացրած մի խումբ վետերանների հետ: Վիետնամի պատերազմի այդ վետերանները հայտարարել էին, թե Քերին իբր ստում է իր զինվորական վաստակի մասին խոսելիս:

Իրավաբան Բենջամին Գինսբերգը կազմված է վետերանների այդ խմբի հետ, որը Քերիին մեղադրող գովազդային տեսահոլովակների շարք է պատրաստել: Դրանցում պնդում է արվում, թե զինվորական ծառայության ժամանակ Քերին չի վաստակել իր բոլոր շքանշանները, ոչ մի օր չի անցկացրել հոսպիտալում, պատերազմի ժամանակ պարգեւների հետամուտ լինելով՝ երբեմն անխոհեմ է վարվել եւ ընդունել անպատասխանատու որոշումներ:

Ի պատասխան, Քերիի թիմը հայտարարել է, թե վետերանների այդ խումբն իր գործողությունները համաձայնեցնում է Ջորջ Բուշի շտաբի հետ: Բուշը եւ իր կողմնակիցները, սակայն, պնդում են, թե որեւէ կապ չունեն տեսահոլովակների հեղինակների հետ:

Գինսբերգի հրաժարականից հետո Քերիի շտաբի պաշտոնական ներկայացուցիչ Ջեդ Ջլանթոնը հայտարարեց, որ հայտնի իրավաբանի պաշտոնանկությունը «եւս մեկ համոզիչ ապացույց է Բուշի թիմի եւ վետերանների խմբի կապերի օգտին»:

Ինքը՝ Գինսբերգը նախագահին գրած նամակում իր հրաժարականը բացատրել է նրանով, թե իր «իրավաբանական կապերը» սկսել են մարդկանց ուշադրությունը շեղել «այս ընտրությունների կարեւորագույն հարցերից»: Իրավաբանի խոսքերով, վետերաններին իրավաբանական օգնություն ցույց տալը «շեղում էր ուշադրությունն իրական հարցերից, որոնց վրա նախագահը եւ երկիրը պետք է բեւեռեն ուշադրությունը»:

BBC-ն շեշտում է, որ Ջոն Քերին Վիետնամում իր անցկացրած զինվորական ծառայությունը դարձրել է սեփական նախընտրական արշավի գլխավոր տարրերից մեկը: Նախագահության երկու թեկնածուներից յուրաքանչյուրը փորձում է ամերիկացիներին համոզել, թե հենց ինքը կկարողանա արդարացնել ԱՄՆ-ի լավագույն պաշտպանությունը:

Վերջերս Քերիի շտաբը պատրաստել է տեսահոլովակների նոր շարք, որտեղ Վիետնամում Քերիի հրամանատարության ներքո ծառայության վետերանները դրվատանքով են խոսում նրա զինվորական արիության մասին:

Պ. Բ.

Գրականություն

Ամեն ստեղծագործություն խռովքի զանգում է

Ընկերուհուս՝ Արեւիկ Ավագյանի մոտ էի օրերս: Գրադարանն էր կարգի բերում: Ինձ դարձեց մեքենագիր մի քանի խունացած էջ: «Քսանչորս տարի է անցել, բայց սրա հետ կապված դատմությունը չեմ մոռանում, անազնիվ մի արարքի ակամա մեղսակիցը լինելու ամոթալի զգացում եմ առում», ասաց նա եւ շարունակեց_ «1980 թվականի աշունն էր: Զբոսաշրջիկի ուղեգրով Երեւանում էր գտնվում սփյուռքում հեղինակություն վայելող գրականագետ Գրիգոր Շահինյանը: Այդ տարիներին նա Շահան Շահնուրի գրական ժառանգության ուսումնասիրությամբ էր զբաղված: Հայաստանյան ռադիոյի եւ հեռուստատեսության նախագահի սփյուռքի գծով տեղակալ Շահե Տատուրյանը օգնեց բացվում էին, իսկ ահա այդ նույն համակարգի մի այլ՝ գորեղ օղակում գերագույն «աչալրջություն» էր ի հայտ բերվում_»:

Ընկերուհուս դատմածին ավելացնեմ, որ 1996 թվականին գրականագետ Գրիգոր Շահինյանը նորանկախ Հայաստանի դեսպան համալսարանում դասընթաց «Շահան Շահնուրի ստեղծագործությունը» թեզը եւ արժանացավ գիտությունների դոկտորի դատվավոր կոչման:

Ահա 1980 թվականին արգելված այդ հոդվածը:

ԳՈՀԱՐ ԱՃԵՄՅԱՆ

Չորրորդ անգամն է, որ ես կուգամ մայր հայրենիք: Չորրորդ անգամն է, որ իմ սիրտը կը լեցվի անհուն բերկրանքով: Իմ սփյուռահայ մարդու կարոտը կթեթեւնա մայրենի հողի վրա եւ ուրախ կ՚ելնեմ: «Այն ատեն է, որ զգացի մտքիս մը, որմե չկրցա ձերբազատիլ: Հանկարծ զգացի յուրահատուկ դարաթ մը, որ մինչ այդ չէի զգացած: Բայց հաջորդ տարին խռովքին հաջորդեց խայտանքը, որովհետեւ երիտասարդ գաղթականը, որ ես էի, փորձեց բան մը իրագործել: Ան ջանաց լուծել վրեժը 1922-ի աղետին՝ զայն վերածելով ֆրանսերեն բարկ ողբերգության մը:

/.../ Ահա թե ինչու,- կշարունակէ Շահնուր,- կարճ ահազանգեր կարձակեի, որոնք կը նշանակեին «ուշադի՛ր եղեք», «փախե՛ք»: Կարծես կուզեի շրջել ճակատագիրը եւ վերստեղծել խնդությունը:

Ֆրանսերեն այս ողբերգութենեն հետք չէ մնացած Շահնուրի ստեղծագործության մեջ: Շահնուր հավանորեն փչացուցած է զայն: Բարեբախտություն է սակայն, որ փաստը կուտա կարելի՝ նկատելու, թե մնայուն է իր ցանկությունը գեղարվեստով հաղթելու կյանքի դառնություններուն:

Հետաքրքրական է նաեւ Շահնուրի այլ մեկ խոստովանությունը, որ կգտնվի իր բարեկամին կնոջը՝ Մադլեն Ֆոլենին ուղղված իր մեկ նամակին մեջ: 1942 թվականն է եւ Շահնուր կգտնվի մահվան ստույգ վտանգի տակ, Ֆրանսայի հարավային քաղաքներեն մեկուն մեջ գտնվող հիվանդանոցի մը մեջ: Հոնկե կգրե, թե կուզե բանաստեղծական հատորիկ մը տալ՝ Ֆոյե ավելի ոիէն վերնագրով: Կխոստովանի, թե փառք չի հետաքրքրեր բնավ, դարգարդես կուզե արդարանալ դգտիկ համբավ մը, որ զինքը ուշադրության առարկա դարձնե եւ բժիշկներու եւ հիվանդարաններու բարյացակամ վերաբերում արդարանվ իրեն:

Գրականությամբ, ուրեմն, կրկնակ նպատակ մը կը հետաքրքրե ան. տիրապետել ախորակամի իր տագնապին, բայց եւ ստեղծել այնպիսի հնարավորություն, որ արվեստի միջոցով ավելի տանելի կյանք ունենա հիվանդանոցին մեջ:

Շահնուրյան երկի ծննդաբանության մասին տրված այս բոլոր մանրամասնությունները կը խտանան «Կրակը կողիս» հատորի մեկ գրության մեջ, որ կկրե հետեւյալ հատկանշական վերնագիրը. «Բոցը, միայն բոցը»: Հոն, համեմատական դատկերի մը մեջ կխտացնե ան գրականության ամբողջ իր ըմբռնումը:

Շահնուր կխոսի զտարանի մը բոցին մասին, որ բարձր խողովակի մը կատարեն կայրե թունավոր գազերը: Իրական այս դատկերով նմանություն մըն է, որ կթելադրե ան: Զտարանի բոցը կսնանի սորերկրյա նեխանիե մը եւ կժայթքե երկիրի ընդերքներեն, մինչ գրականությունը, որ կգայտե մարդկային հոգիեն եւ իր սնունդը կծծե այն մյուս նեխանիեն, որ մարդկային հոգիի տագնապն է: Երկուքն ալ կրնան անօգուտ թուիլ, բայց գեղեցկորեն կայրին բարձունքներուն մեջ եւ իրենց գոյությամբն իսկ կրկնակ դեր մը կխաղան՝ հնարավոր վտանգի մը առաջը կառնին եւ զտումի առաքելություն մը կիրագործեն:

Գրական ստեղծագործությունը, անհատական փրկության միջոց, ազդակ է նաեւ հավաքական փրկության: Գրողը կարդի ազգային ողբերգություն մը, անձնական երանգներով: Սեփական իր տագնաքը անհատական տարբերակն է դարգարդես հավաքական խռովքին: Ամբողջ ազգ մը, բրտորեն առատախիլ եղած իր դարդենական հողերեն, ինքզինքը կգտնե օտար մայթերու վրա, անտարբեր եւ անկարեկից մարդերու շրջանակի մը մեջ: Ան հակադրված է նաեւ կյանքի առօրյա դժվարություններուն եւ գոյության հիմնական անհեթեթության: Այս դայմաններուն մեջ, կըսե Շահնուր, ախորական ժողովուրդը կարտադրե յուրահատուկ թույն մը, որ կը զարգացնե զգացումներն ու մտածումները: Հավաքական «նեխանք» մըն է առաջացածը, որուն դետք է դարման մը գտնել արվեստով: Այս հավաքական հոգեվիճակին եւ անոր վերլուծումին է որ հատկացված են Շահնուրի հայերեն գործերը: Զանոնք իրագործելով անձնական լուծում մը կփնտրե ան իր տագնապին, միաժամանակ կփորձե հավաքական ախտահանում մը, որ գոնի ընկերային իր դարտքն ըլլա հատարակության:

Այսդես է, որ իր գործը, ամենեն անձնականը, իր սերնդին, միաժամանակ ամենեն ընդհանրականն է ամենեն ավելի լայն ձեւով արձագանքողը ազգային եւ հատատ հարցերուն: Եվ Շահնուր, մեկնելով անձնական դդդատաձառներե, կհանգի այնդիսի ընդհանրացումներու, որոնք կը դարձնին զինք լավագույն ներկայացուցիչը իր սերունդին: Կարծ այս վերլուծումը կը ձգտի ցուցնելու ծննդաբանությունը Շահնուրի գրականության եւ ինքնաբերաբար կհանգի ախորի եւ արվեստի նորահայտ կարերու բացահայտումին: Կարելի է խորացնել զայն եւ մանրամասնել, ժամերով խոսիլ սփյուռքի մեր գրականության անզուգական այս վարդետին մասին, որ միաժամանակ ֆրանսական ժամանակակից գրականության յուրահատուկ դեմքերեն մեկն է: Ձայնաստիյուռային կարծ հաղորդում մը չի բավեր անշուշտ նման ընդհանրացումներու: Ես դոկտորական իմ ավարտաձառս հատկացուցած եմ այս նյութին եւ կը խոստովանիմ, թե չեմ կրցած սպառել զայն: Կգոհանամ ուրեմն ուվագծային այս դատկերացումով ու ներողություն կը խնդրեմ ձեզմե, սիրելի ունկնդիրներ, որ նախաձաւակ մը միայն կրցա տալ ձեզի Շահնուրյան գրականության խոր նշանակության մասին:

Կուզեմ նաեւ, հրաժեշտ առնելե առաջ ձեզմե, շնորհակալություն հայտնել հայրենի ձայնաստիյուռի վարչության եւ հատկապես ընկեր Շահե Տատուրյանին, որուն հրավիրեցին զիս խոսելու Շահնուրի մասին, հնարավորություն տվին ինձի բաժնելու ձեզի հետ իմ խոր սերս այս հեղինակին հանդեմ, միաժամանակ հաղորդելու ձեզի հայտնի ոլորտի մեջ սավառնող անտեսանելի ալիքներով, որոնք դատկերն են իմ հոգիս ձերինները կարող անհամար, անհամար թելերուն:

ԳԵՐՄԱՆ ԱՍՏԱՖՅԱՆ

Ստեփան Ալաջաջյանը 80 տարեկան է

Անվանի գրող եւ հրատարակախոս Ստեփան Ալաջաջյանը դարձավ 80 տարեկան: Երեկ Չարենցի անվան գրականության եւ արվեստի դետական թանգարանի տնօրենությունը Հենրիկ Բախչինյանի գլխավորությամբ կազմակերդել էր ցերեկույթ՝ նվիրված անվանի գրողի 80-ամյակին:

Ստեփան Ալաջաջյանը ծնվել է 1924 թ. Սիրիայի Հալեդ քաղաքում: Տեղի քոլեջն ու Բեյրութի ամերիկյան համալսարանն ավարտելուց հետո 1946 թ. ներգաղթել է Սովետական Հայաստան ու ընդունվել ԵՊՀ-ի բանասիրական, հոգեբանության եւ տրամաբանության բաժինները: Այնուհետեւ ուսումը շարունակել է՝ հաճախելով Մոսկվայի երկամյա գրական բարձրագույն դասընթացներին: Վերադառնալուն դես անցել է աշխատանքի «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրությունում, այնուհետեւ՝ «Հայդետհրատում», որդից հետո նշանակվում է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: 1981–86 թթ. նշանակվել է Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն:

Ստեփան Ալաջաջյանն արժանացել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչմանը, «Աշխատանքային գերազանցության» կրծքանշանին, «Պատվո նշան» եւ «Ժողովուրդների բարեկամություն» շքանշանների եւ եվրոդական գրողների PEN ակումբի անդամ է:

Ալաջաջյանը գրել սկսել է վաղ հասակից եւ տդագրվել է Սիրիայի ու Լիբանանի գրական մամուլում: Գրողի առաջին գիրքը՝ «Վշտի ծաղիկները», լույս է տեսել Հալեդում 1942 թ.: Իսկ 1953-ից սկսած տարին մեկ ընթերցողի դատին են հանձնվել «Անառատում», «Դարտություն», «Այգիների աշխարհում», «Քյունիկ», «Առանց հայրենիքի», «Արծիվն ու հովիվը», «Մաղլենն ադում է Փարիզում», «Անառագաստ նավակներ», «Աղառաժներն արտասվել գիտեն», «Ոսկեգույն Ծիրկաքին» վեդերն ու վիդակները: Իսկ «Եղեգները չխոնարհվեցին» վեդը, որը նվիրված է Եղեռնից փրկված բեկորներին ու դատմում է Զեյթունի վերջին հերոսամարտի մասին, Ցեղասդանությունը նկարագրող արժեքավոր դատմական վավերագիր է ու անգնահատելի ժառանգություն սերունդներին: Հենց այդ գրքի վերահրատարակությունը ներկայացնելով միջոցառումը բացեց Հենրիկ Բախչինյանը, շնորհավորելով գրողին եւ նրա որդուն՝ Զոհրադին փոխանցեց բանգարանի հուշանվերն ու Ալաջաջյանին մաղթեց առողջություն ու երկար տարիների կյանք:

Արդեն 14 տարի է Ստեփան Ալաջաջյանը բնակվում է ԱՄՆ-ի Գլենդեյլ քաղաքում: Այդ ընթացքում լույս են տեսել նրա հուշագրությունների չորս գրքերը: Ալաջաջյանն իր մեծ լուման է ներդրել նաեւ հայ թարգմանչության գրական ասդարեզում՝ թարգմանելով Շեքսդիր, Հերբերտ Ուելս, Սարսր, Վիլյամ Սարոյան եւ այլն: Գրողին, գրչակից ընկերոջը ներկայացրին Պերճ Զեյթունցյանը, ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը, Արեւաս Ավագյանը (մշակույթի ֆոնդի տնօրեն), գրող Հրաչյա Մաքենոյանը, լրագրող Վանիկ Սանթրյանը: Ստեփան Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» վեդից հատվածներ ընթերցեցին Վլադիմիր Աբաջյանը, Սվետլանա Խանումյանը, Ազաս Գասդարյանը: Գրողի որդին՝ Զոհրադ Ալաջաջյանը շնորհակալական խոսք հղեց միջոցառման կազմակերդիչներին, գրքի վերահրատարակիչներին («Վան Արյան») եւ, իհարկե, գրքի խմբագիր Գոհար Աճեմյանին, ու ներկաներին հրավիրեց լիքը բաժակներով ու հայկական անուշահամ մրգերով տոնելու գրողի 80-ամյակը եւ մաղթելու նրան երկար կյանք, առողջություն ու ստեղծագործական նոր որոնումներ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԱՍՅԱՆ

Մրցանակակիրներ, բայց ոչ Հայաստանի դրոշի ներքո

Բաձային չորս կարգերում հունահռոմեական ոճի ըմբիշները վիճարկեցին օլիմպիական պարգեւները: Հուրախություն մեր մարզասերների, նրանց թվում են նաեւ հայ մարզիկները: Ճիշտ է, նրանք Հայաստանը չէին ներկայացնում, սակայն ամեն դեպքում ուրախալի է, որ Աթենքում հայազգի մարզիկներին եւս հաջողվում է դառնալ մրցանակակիր:

Հայազգի ըմբիշներից բոլորից հաջող ելույթ ունեցավ նախկին գյումրեցի, արդեն բավական ժամանակ Շվեդիայի հավաքականում հանդես եկող Մխիթար Մանուկյանը (66 կգ) արժանացան բրոնզե պարգեւների: 3-րդ տեղի համար պայքարում նրանք համարաստխանաբար հաղթեցին ուկրաինացի Ալեքսեյ Վակուլենկոյին (6–1) եւ ամերիկացի Ջիմի Սամուելսոնին (8–1): 55 կգ քաշային կարգում չեմպիոն հռչակվեց հունգարացի Իշտվան Մայորոշը՝ հաղթելով ռուսաստանցի Հեյդար Մամեդալիեւին (3–1): 66 կգ քաշայինների մրցավեճում ուժեղագույնն Ադրբեջանի ներկայացուցիչ Ֆարիդ Մանսուրովն էր, որը պարտության մատնեց թուրք Շերեֆ Էրոլլուն (4–3):

Գերծանր քաշայինների մրցավեճում օլիմպիական ոսկե մեդալին արժանացավ ռուսաստանցի Հասան Բարոեւը, որը եզրափակիչ գոտեմարտում հաղթեց ղազախստանցի Գեորգի Ցուրցումիային (4–2):

Ցավոք, օլիմպիական չեմպիոնի կոչման համար պայքարից դուրս մնացին ռուսաստանցի օլիմպիական չեմպիոն Վարդերես Սամուրաշեւը (74 կգ) եւ օլիմպիական խաղերի կրկնակի հաղթող, Բուլղարիան ներկայացնող Արմեն Նազարյանը (60 կգ): Սամուրաշեւը կիսաեզրափակիչում 2–3 հաշվով պարտվեց Ուզբեկստանի ներկայացուցիչ Ալեքսանդր Դոկտուրիշվիլուն եւ բրոնզե մեդալի համար երեկ ուշ երեկոյան պետք է ուժերը չափեր շվեյցարացի Ռետո Բուտերի հետ: Արմեն Նազարյանն եզրափակիչի ուղեգրի համար պայքարում զիջեց կորեացի Յունգ Ժի Հյունին եւ 3-րդ տեղը պետք է վիճարկեր ռուսաստանցի Ալեքսեյ Շեւցովի հետ:

Այսօր իրենց պայքարը կսկսեն ազատ ոճի ըմբիշները: Հայաստանն նում հանդես եկող Արա Աբրահամյանը: 2001 թ. նա 76 կգ քաշային կարգում առաջին անգամ հռչակվեց աշխարհի չեմպիոն, իսկ հաջորդ տարի ուժեղագույնը ճանաչվեց 84 կգ քաշայինների մրցավեճում: Օլիմպիական խաղերի չեմպիոնի համար մրցավեճում Արայի մրցակիցը ռուսաստանցի Ալեքսեյ Միշինն էր: Համառ մրցապայքարում գրանցվեց ոչ-ոքի (1–1), սակայն մրցավարները հաղթանակը շնորհեցին ռուս ըմբիշին: Ամեն դեպքում օլիմպիական արծաթե մեդալն էլ մեծ նվաճում է, եթե հաշվի առնենք, որ Սիդնեյում Աբրահամյանը 6-րդն էր: Իսկ քաշային այս կարգում 3-րդ մրցանակակիրը բելառուս Վյաչեսլավ Մակարենկոն է, որը հաղթեց թուրք Համզա Յեռլիկայային (2–1):

84 կգ քաշային կարգում մրցանակակիրները. ձախից՝ Արա Աբրահամյանը:

Հունաստանը ներկայացնող Արսյոմ Կյուրեղյանը (55 կգ) եւ Ղազախստանի հավաքականում հանդես եկող Մխիթար Մանուկյանը (66 կգ) արժանացան բրոնզե պարգեւների: 3-րդ տեղի համար պայքարում նրանք համարաստխանաբար հաղթեցին ուկրաինացի Ալեքսեյ Միշինն էր: Համառ մրցապայքարում գրանցվեց ոչ-ոքի (1–1), սակայն մրցավարները հաղթանակը շնորհեցին ռուս ըմբիշին: Ամեն դեպքում օլիմպիական արծաթե մեդալն էլ մեծ նվաճում է, եթե հաշվի առնենք, որ Սիդնեյում Աբրահամյանը 6-րդն էր: Իսկ քաշային այս կարգում 3-րդ մրցանակակիրը բելառուս Վյաչեսլավ Մակարենկոն է, որը հաղթեց թուրք Համզա Յեռլիկայային (2–1):

ԼՈՒԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանը Սաակաշվիլուն հորդորում է...

1-ին էջից

Նախագահ Սաակաշվիլին ցայտնոտի մեջ է: Հարավային Օսիայի ձախողված գործողություններից հետո, որի արդյունքում Վրաստանը կորցրեց 16 զինվոր՝ վստահի տակ դնելով նաեւ չճանաչված հանրապետությունում բնակչության շուրջ 20 տոկոսը կազմող վրացիների անվտանգությունը, նախագահը պաշտոնից ազատեց գլխավոր շտաբի պետ Գիվի Իուկուրիձեին: Նրա փոխարեն նշանակվել է ԱՄՆ-ում կրթություն ստացած Վախթանգ Կապանաձեն:

Մի քանի օր առաջ Սաակաշվիլին ֆրանսիական «Լիբերասիոն» թերթին տված հարցազրույցում ասել էր, որ Վրաստանը շաս մոտ է Ռուսաստանի դեմ պատերազմին, եւ բնակչությունը պետք է դրան պատրաստ լինի: Երեկ Վրաստանի նախագահի վերոնշյալ խոսքերին պատասխանել է Ռուսաստանի արտգործնախարարությունը: Մոսկվան Սաակաշվիլուն խորհուրդ է տվել ձեռնպահ մնալ ռազմաշունչ հայտարարություններից եւ ողջ ուժերը կենտրոնացնել Վրաստանի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման վրա: Ռուսական կողմը Հարավային Օսիայի վերջին իրադարձությունները որակել է ռազմական սադրանք, իսկ «Լիբերասիոնին» տված մեկնաբանությունները՝ ամբողջությամբ չափի զգացողության պակաս:

Երեկ Սաակաշվիլին Գուրիայի երկրամասում հայտարարել է, որ Վրաստանին այսօր պետք են տասնյակ հազարավոր պահեստայիններ, որպեսզի յուրաքանչյուր թշնամի, ով կորոշի ագրեսիա սկսել Վրաստանի դեմ, իմանա, որ, բացի կանոնավոր բանակից, նրա դեմ դուրս են գալու հազարավոր պահեստայիններ: Սաակաշվիլին, օրինակ բերելով Իսրայելին, վրացուհիներին հորդորել է լրացնել վրացական բանակի պահեստայինների շարքերը:

Թբիլիսիի իշխանություններին ակնհայտորեն նյարդայնացրել են Հարավային Օսիայում վերջին օրերի կրած պարտությունը, ինչպես նաեւ ռուսական զորքերի զորավարժությունները Վրաստանի հենց հարեւանությամբ: Ընդամենը երեկ Դաղստանում ավարտված զորավարժություններին հետեւեց եւս մեկը՝ այս անգամ Հյուսիսային Օսիայում: Այսօր կավարտվեն հայ-ռուսական համատեղ զորավարժությունները: Թբիլիսիի իշխանությունները նշում են, որ անմիջականորեն Վրաստանի հարեւանությամբ անցկացվող զորավարժությունները ռուս-վրացական լարված հարաբերությունների ֆոնին առնվազն ոչ բարեկամական գործողություններ են:

Նկատենք, որ Սաակաշվիլու՝ Ռուսաստանի հասցեին ինչող վերջին հայտարարություններն արդեն սկսել է ննջադաստել նաեւ Արեւմուտքը: Հեղինակավոր «Նյու Յորք թայմսն» իր վերջին համարներից մեկում գրեց. «Այն պահից, երբ նյույորքյան իրավաբան Սաակաշվիլին դարձավ նախագահ, նա վրաց ժողովրդին տանում է մի ճանապարհով, որով դժվար է հասնել մինչեւ վերջ»: Ամերիկյան «Ինտերնեշնլ հերալդ տրիբյունը» գրեց, որ աբխազական եւ հարավօսական հակամարտությունները լուծելու ուղղությամբ Սաակաշվիլու քայլերը նշանակում են «խաղ կրակի հետ»:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այն մարդիկ, ովքեր մտածում են օտար երկիր գնալու մասին եւ կարիք ունեն իմանալու, թե ինչ է տրամվում իրենց օտար պետություններին «հանձնվելու», փախստականի կարգավիճակ հայցելու դեպքում կամ աշխատանք կատարելու ինչպիսի ռեալ պայմաններ եւ հեռանկարներ կան, ի վերջո ո՞րն է իրականությունը եւ որը միֆը, արդա կարող են այցելել ՀՀ կառավարության առընթեր **միգրացիայի եւ փախստականների** վարչություն, որի հասցեն է՝ Հր. Քոչարի 4, ինչպես նաեւ զանգահարել **224727** «թեժ գիծ» հեռախոսահամարով եւ հիշատակված հարցերի վերաբերյալ տրանալ բարձրորակ, սպառիչ եւ անվճար խորհրդատվություն:

ՀՀ Կենտրոնական բանկը 27.08.2004թ. ժ.9.00 ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները.

ISO ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	515.56	510.40	520.70
EUR	1	ԵՎՐՈ	623.83	620.10	627.60
RUR	1	Ռուս. ռուբլի	17.64	16.60	18.70

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Կարեն Ավանեսյանը խորին շնորհակալություն է հայտնում «Արմենիա» ԲԿ II թերապիայի բաժանմունքի բժշկական անձնակազմին եւ առանձնապես իրեն բուժող ***բժիշկ Սվետլանա Հովսեփյանին*** բուժման համար:

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՕՏՆՈՒՈՏՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ի կատարումն ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների, ծանուցվում է ՀՀ Կոտայքի մարզի Կաթնաղբյուր գյուղի հողի սեփականատեր Հարություն Մանուչարյանին ձկնաբուծական նպատակով «Կաթնաղբյուր» ջրաղբյուրների ստանձից դուրս բերվող մակերեսային ջրային ռեսուրսներից 8,5 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Գործունեությունից կեղտաջրեր չեն առաջանում:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. սեպտեմբերի 7-ին, ժամը 16.00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ
FUND FOR ARMENIAN RELIEF

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱՊԱԳԱ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) «Մաթեոսյան կրթավճար» ծրագրի շրջանակներում պետական բուհերի (ԵՊՀ, Երեւանի պետական տնտեսագիտական ինստ.) այս տարվա դիմորդների համար, ովքեր անցել են 1-ին կուրս, հայտարարում է մրցույթ, որի արդյունքում 10 հաղթողների ուսման վարձը՝ լրիվ տեղությամբ, լիովին կվճարի ՀՕՖ-ը:

Մրցույթին կարող են մասնակցել այն դիմորդները, որոնք

ա) ունեցել են բարձր առաջադիմություն դպրոցում, ավարտական քննությունները հանձնել են գերազանց, իսկ ընդունելության քննությունները՝ բարձր գնահատականներով, սակայն մրցույթով դուրս են մնացել անվճար ուսուցման ցուցակներից եւ օգոստոսի 25-ի տվյալներով անցել են վճարովի ուսուցման բաժիններ,

բ) պետական բուհերի դիմորդներ են՝ **տնտեսագիտություն, կառավարում, իրավագիտություն, միջազգային հարաբերություններ, լրագրություն, բանասիրություն** մասնագիտությունների գծով,

գ) սոցիալապես կարիքավոր ընտանիքներից են,

դ) համաձայն են ուսման ավարտից հետո նվազագույնը 5 (կամ իրենց ուսման տարիների չափով) տարի աշխատել Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախում:

Վերջին կետի վերաբերյալ ՀՕՖ-ի եւ ուսանողի միջեւ կնքվում է պայմանագիր, որի խախտման դեպքում տվյալ ուսանողը կամ նրա ընտանիքը պետք է փոխհատուցեն ուսանն առնչվող ՀՕՖ-ի կատարած ծախսերը՝ հավելավճարով:

Ուշադրությո՛ւն.

Ուսման ընթացքում ուսանողի առաջադիմության անկման կամ նրա ընտանիքի սոցիալական վիճակի բարելավման դեպքում ՀՕՖ-ը կդադարեցնի ուսման վարձի վճարումը: Մրցույթին մասնակցել ցանկացող դիմորդները, որոնց տվյալները համապատասխանում են վերոհիշյալ պայմաններին, կարող են ներկայանալ ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակ եւ լրացնել համապատասխան դիմումի ձեւը: Դիմումին կից պետք է ներկայացնել անձնագիր (պատճեն), միջնակարգ կրթության վկայական (պատճեն), ընդունելության քննությունների քննաթերթիկ, համապատասխան տեղեկանք վճարովի ուսուցմամբ ուսանող դառնալու վերաբերյալ, ընտանիքի սոցիալական անձնագիր (պատճեն): Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաեւ տեղեկանքներ բնակության վայրից, համայնքի սոցիալական ծառայությունից եւ այլն:

Դիմումներն ընդունվում են 2004 թ. օգոստոսի 27-ից 30-ը ներառյալ: Սույն մրցույթի արդյունքները կամփոփվեն ս. թ. սեպտեմբերի 10-ին: Խնդրում ենք չգանգել եւ անձամբ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Հասցեն՝ ԵՐԵՎԱՆ, ԽՈՐԵՆԱՑԻ 22:

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՕՏՆՈՒՈՏՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, ծանուցվում է ՀՀ Կոտայքի մարզի Գառնի գյուղի բնակիչ Անդրանիկ Գրիգորյանին, ձկնաբուծական նպատակով «Ազազան» կոչվող աղբյուրից 8,5 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. սեպտեմբերի 6-ին, ժամը 16.00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՕՏՆՈՒՈՏՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ի կատարումն ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, ծանուցվում է ՀՀ Տավուշի մարզի Բարեկամական համայնքի իր վարչական տարածքում գտնվող «Անցի» կոչվող աղբյուրից 1,7 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Գործունեությունից կեղտաջրեր չեն առաջանում:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. սեպտեմբերի 7-ին, ժամը 16.00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՕՏՆՈՒՈՏՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, ծանուցվում է ՀՀ Արմավիրի մարզի Տրդատս համայնքի հողի սեփականատեր Արման Մելիքյանին ձկնաբուծական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսներից 41,2 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. սեպտեմբերի 6-ին, ժամը 16.00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ARG

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N1034-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» եւ «Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու միջոցառումների եւ առանձին խմբերի քաղաքացիների արտոնությունների մասին» N 251 որոշման 2-րդ կետից հանվել է «գազի» բառը, որով գազի բաժանորդային վարձի 50 % զեղչով վճարման իրավունքից օգտվող քաղաքացիների համար դադարեցվել է արտոնությունից օգտվելու իրավունքը:

Որոշումը հրապարակվել է 11. 08. 2004 թ. N 43 (342) ՀՀ պաշտոնական տեղեկագրում եւ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի, ուժի մեջ է մտել դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, այսինքն՝ 21.08. 2004 թ.-ից:

The Eurasia Foundation
Representative Office in Armenia
announces job opening for the position of

GRANTS ASSOCIATE

The role of Grants Associate is to: 1) review grant applications; 2) prepare grant agreements; 3) monitor grantees' financial reports; 4) conduct site visits; 5) update automated grant database; 6) maintain contact with grantees.

Qualifications: University degree (preferably in Economics or Finance). At least 3 years experience in finance and/or accounting position. Grants management experience is preferred. Knowledge of local accounting standards and local NGO legislation. Proficiency in Armenian and Russian; good knowledge of English language. Strong computer skills: MS Excel, Word, Access, E-mail, Internet.

TO RESPOND

Applicants should submit a letter of interest and resume in English before **September 3, 2004 to:**

Country Director, The Eurasia Foundation Armenia
4 Demirchyan Street, Yerevan, Armenia
Ph./fax: 56-54-78, 58-60-59, 58-61-59
E-mail: resume@eurasia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

տեղեկագրքով, Ինտերնետով, CD-ով, հեռախոսով

ՍՓՅՈՒՌ տեղեկատվական ծառայություն

Երեւան, Փավստոս Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
Հեռ. 590000 www.spyur.am

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 26.08.2004 Գինը՝ 100 դրամ